

ՈՒՂԵՐՁՆԵՐԻ 23-ՐԴ ՇՐՋԱՆ

Սանատ Կումարա
20 դեկտեմբերի, 2016 թ.

Արմագեդոն

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան: ՕՄ:

Այսօր այն օրն է, որը ես նշել էի, որ ձեր գիտակցությանը հասցնեմ ոչ հանելի շատ բաներ:

Երկար մտորելուց հետո ես հանգեցի այն եզրակացությանը, որ ձեզ անհրաժեշտ է այդ բաներն իմանալը, որպեսզի գիտակցված ձևով կտարեք ձեր ընտրությունները:

Ձեր ժամանակը բնութագրվում է «Հոգևոր ճակատամարտ» եզրույթով: Այդ ճակատամարտն ընթանում է Լույսի և խավարի միջև:

Ձեզ թվում է, թե ձեր շուրջը խաղաղ երկինք է և ավերածություններ չկան:

Պաշտելիներս, ձեզնից շատերը սխալ պատկերացում ունեն ընթացող ճակատամարտի վերաբերյալ:

Ֆիզիկական ոլորտում այդ ճակատամարտը կարող է արտահայտվել պատերազմի՝ պայքարների, ռումբերի ու հրետակոծությունների տեսքով:

Սակայն անհամեմատ ավելի ահավոր է այն ճակատամարտը, որն ընթանում է ձեր հոգիների համար: Իսկ այդ ճակատամարտը հիմա հասել է իր թեժության գագաթնակետին:

Հնարավոր է, որ ձեզնից ոմանք գլխի չեն ընկնում, որ այդ ճակատամարտն ընթացքի մեջ է: Նրանք փորձում են ազատվել իրենց կարծիքով վատագույնից՝ պատերազմից, որի նմանը տեղի ունեցավ անցյալ դարի կեսերին:

Ո՛հ, պաշտելիներս, ներկայումս ընթացող պատերազմը կամ ճակատամարտը շատ ավելի վտանգավոր է հենց այն պատճառով, որ դուք նույնիսկ չեք էլ կասկածում, որ գտնվում եք այդ ճակատամարտի կիզակետում, և կռիվը գնում է հենց ձեր հոգու համար:

Այժմ ես ուզում եմ մի փոքր հետ գնալ: Դա թույլ կտա ձեզ, որ ավելի լավ հասկանաք, թե ինչպես են աշխատում Լույսի ուժերը, և ինչպես են աշխատում մեզ հակադիր ուժերը:

Ձեզ հայտնի է, որ այս դարի սկզբում Մենք փորձեցինք Ուղերձների տեսքով Ուսմունք տալ Ռուսաստանին:

Մենք բազմիցս ասել ենք, որ դա կատարյալ աննախադեպ հնարավորություն է՝ Երկնքի վիթխարի ողորմածությունը:

Մենք նաև անընդհատ կրկնում էինք, որ յուրաքանչյուր Ուղերձ տրվում է Աստծո էներգիայի հսկայական ծախսով: Իրոք այդպես էր, սիրելիներս:

Իս ինչու՞ էր Երկինքն այդքան ջանքեր գործադրում...

Արդարացված էին արդյոք այդ ջանքերը...

Միայն հիմա՝ ես կարող եմ բացել ճշմարտության մի մասը և ասել, թե ինչ նպատակով էր տրվում Ուսմունքը:

Մեր Դեսպանորդին Մենք նախապատրաստեցինք արագացված տեմպերով և ուրախացանք, որ ամեն ինչ լավ ստացվեց: Անոթը պատրաստ էր Լույսի էներգիան ընդունելու և փոխանցելու համար:

Մենք ձեռնամուխ եղանք Ուսմունքի և նրան ուղեկցող Լույսի արտազատման գործին:

Ուսմունքի փոխանցումը տևեց ավելի քան 10 տարի:

Եվ միայն հիմա ես կարող եմ ձեզ համար բացել ճշմարտության մի մասը, թե ինչի համար էր պետք այդ փոխանցումը:

Ամեն անգամ, երբ ավարտին են մոտենում տիեզերական բոլորաշրջանները, գալիս է մի ժամանակ, երբ հոգիները պետք է ընտրություն կատարեն: Եվ այդ ընտրությունից կախված՝ նրանք կան իրենց էվոյուցիան շարունակում են նոր մակարդակում, կան զրկվում են իրենց բոլոր ձեռքբերումներից և իրենց էվոյուցիան շարունակում ավելի ցածր

մակարդակում, կա՛մ հոգու էվոյուցիան ընդմիշտ դադարեցվում է, և այդ հոգին մահվան հրեշտակների բաժին է դառնում:

Այդ պատճառով ամեն մի բոլորաշրջանի վերջնամասում մարդկանց նորացված Ուսմունք ստանալու հնարավորություն է տրվում, որի շնորհիվ հոգիները ճշմարիտ կողմնորոշիչներ են ստանում և պահպանում իրենց հետագա էվոյուցիայի հնարավորությունը:

Մենք մեր առաքելությունը սկսեցինք իրականացնել Ռուսաստանում: Այդ երկիրը պատահաբար չէր ընտրված: Հենց այդ ժամանակ այդտեղ էին մարմնավորվել լավագույն հոգիները, որոնք հատուկ ընտրված էին այդ առաքելության իրականացման համար:

Մի քանի հարյուր հոգիներ էին կանչվել գործի, որ միլիոնավոր հոգիների փրկեն ոչ միայն Ռուսաստանում, այլ նաև ամբողջ երկրագնդում:

Մենք սկսեցինք առաքելությունը Ռուսաստանում: Լույսի հսկայական քանակություն ճառագվեց:

Սակայն հետո տեղի ունեցավ այն, ինչը մեր պլանների մեջ չէր մտնում. Ռուսաստանի մարմինը մեր Դեսպանորդին օտարեց իրենից:

Մեր Դեսպանորդը ստիպված եղավ լքել Ռուսաստանի տարածքը:

Մենք ևս 4 տարի սպասեցինք այն հույսով, որ լուսակիրները խելքի կգան և համատեղ ուժերով կկարողանան փոխել իրավիճակը:

Սակայն դա տեղի չունեցավ:

Դուք գիտեք, որ բնությունը դատարկություն չի սիրում:

Հենց որ Ռուսաստանի տարածքն ազատվեց մեր էներգիաներից, կատաղի պղտոր հեղեղով այնտեղ ներխուժեցին մեզ հակադիր ուժերը:

Խավարի ուժերն ուղղակի զավթեցին այդ երկիրը:

Դա հասարակության առավել գիտակից մասի կատարած ընտրության արդյունքն էր՝ այն լուսակիրների, որոնք որոշեցին չկատարել իրենց առաքելությունը:

Լուսակիրների հետ կանգնելու պատրվակները տարբեր էին՝ ուղղակի դավաճանությունից մինչև լուռ անգործություն:

Ռուսաստանի մարմինը հայտնվեց Մեզ հակադիր ուժերի զավթման տիրույթում:

Այնինչ դուք պատերազմ էիք սպասում, ավերածություններ...

Պաշտելիներս, պատերազմը լրիվ ընթացքի մեջ է: Դա հոգևոր պատերազմ է՝ ձեզ համար ամենացավալի ելքով:

Մահանում են մարդկանց հոգիները: Ամենանենգ եղանակներով:

Հատուկ նշանառության տակ է երիտասարդությունը:

Հատկապես նրա դեմ են ուղղված այն տեխնոլոգիաները, որոնք խոցում են հոգին և նրան զրկում էվոյուցիան շարունակելու հնարավորությունից:

Համակարգչային խաղերը, ավերիչ երաժշտությունը, թմրանյութերը, կեղծ բարոյական իդեալները, ցանկությունների բորբոքումը և ամեն գնով դրանց իրականացմանը մղելը՝ կանգ չառնելով ոչնչի, նույնիսկ սպանության առջև:

Տարածության թրթռանքն իջեցվում է այնքան, որ Մեր էներգիաներն այլևս չեն կարողանում ներթափանցել ոչ մի խոշոր քաղաքի տարածք:

Չստանալով Մեր օգնությունը, մարդիկ կատարյալ անօգնական վիճակում հայտնվում են հակադիր ուժերի նենգության առջև:

Իսկ հիմա ես ձեզ կհիշեցնեմ հիմնականը՝ այն մասին, թե ինչու էինք տալիս մեր Ուղերձները: Մենք ձգտում էինք ձեր հոգիները հետ բերել դեպի զարգացման էվոյուցիոն Ուղին: Իսկ այդ Ուղով առանց Աստծո հնարավոր չէ ընթանալ:

Աստված տանարներում կամ եկեղեցիներում չի բնակվում: Աստված մարդկանց սրտերի մեջ է:

Եվ երբ մարդկանց կրիտիկական մեծամասնությունը հրաժարվում է Աստծուց, այնժամ հասարակությունը հայտնվում է հակադիր ուժերի իշխանության տակ:

Եվ Ուղին փակվում է:

Օր օրի հանգչում է նորանոր եկեղեցիների, տանարների, մզկիթների գոհասեղանների կրակը:

Օր օրի մարում է բոցը հազարավոր մարդկանց սրտերում:

Օր օրի հազարավոր մարդիկ զրկվում են իրենց էվոյուցիան շարունակելու հնարավորությունից:

Եվ այդ ամենը ձեր կատարած ընդհանրական ընտրության արդյունքն է:

Դա Աստծուց և Աստվածառաջնորդությունից հրաժարվելու արդյունքն է:

Տխուր է այս մասին լսելը: Բայց էլ ավելի տխուր է այս ցավալի ճշմարտությունը ձեր գիտակցությանը հասցնելը:

Չի ողջ աշխարհը դեպի կործանում է գնում:

«Դեպի ուր ընթանա Ռուսաստանը, այնտեղ էլ կգնա ողջ աշխարհը», - այսպիսին է եղել այս հազարամյակի սկզբում հայտնված մարգարեությունը:

Եվ ահա այն իրականանում է ձեր աչքերի առաջ:

Այն, ինչ ցածր է Աստվածային կատարելությունից, չի կարող անցնել էվոյուցիոն զարգացման հաջորդ փուլ:

Ավարտվում է մեծ տիեզերական բոլորաշրջանը: Այն ամենը, ինչն Աստծուց չէ, ենթակա է կործանման:

Դրա համար էլ Աստված թույլ է տալիս, որ մոլեգնեն հակադիր ուժերը:

Մեկը պետք է ավարտին հասցնի տիեզերական աղբից մոլորակը մաքրելու գործը:

ԵՍ ԵՄ Մանատ Կումարան: ՕՄ

Պաշտելի Ալֆա

21 դեկտեմբերի, 2016 թ.

Ձեզնից յուրաքանչյուրին, ով կհաղթահարի պատրանքը, Ես կդիմավորեմ անձամբ...

ԵՍ ԵՄ Ալֆան՝ ձեր Երկնավոր հայրը:

Այսօր, սիրելիներս, Ես կուզենայի ձեզ հետ զրույց վարել ձեր հոգևոր փրկության վերաբերյալ:

Աշխարհում ամեն ինչ շատ արագ է փոխվում, և այդ փոփոխություններն անխուսափելիորեն ազդում են ձեր հոգու վրա:

Աշխարհում կա Ճշմարտություն: Եվ այդ Ճշմարտությունն Աստծո մեջ է:

Երբ Աստված հեռանում է ձեր կյանքից, դա իր անխուսափելի ազդեցությունն է ունենում ձեր հոգու վրա:

Հոգին կարոտում է, բայց չգիտե, թե ինչպես դուրս պրծնի պատրանքի գերությունից:

Ուստի Ես այցի եմ գալիս ձեզ, սիրելիներս:

Մարմնավորման մեջ գտնվող յուրաքանչյուր հոգու նկատմամբ հոգածությունն անմիջական պահանջ է Ինձ համար: Ձեզնից յուրաքանչյուրին Ես սիրում եմ հայրական Միքով: Եվ Երկնքում սպասում եմ ձեզնից յուրաքանչյուրին:

Մեծ ու փոքր սխալները, մոլորություններն անխուսափելի են Տունդարձի Ուղու վրա: Սակայն Ես եկել եմ, որ ձեզ զգուշացնեմ այն վտանգից, որը հենց հիմա, ժամանակի այս պահին է կանգնած ձեր Ուղու վրա:

Համբարձյալ Դասերի գլխավոր հոգսը ձեր հոգիների փրկությունն է:

Եվ այնժամ, երբ հոգին ենթարկվում է մահացու վտանգի, դա անհանգստություն է առաջացնում Լույսի ամբողջ Հիերարխիայում:

Ձեր աշխարհը խավարի ուժերի ազդեցության տակ է ընկել: Բոլորաշրջանների հերթագայության ընթացքում այդ փուլն անխուսափելի է:

Դեռևս մի քանի տարի առաջ Ես չէի անհանգստանում մարդկության էվոյուցիայի հարցով, քանզի այդ փուլի անվտանգ հաղթահարման համար ձեռնարկված էին բոլոր միջոցները:

Սակայն այն բանի պատճառով, որ Լույսի շատ զավակներ սխալ ընտրություններ կատարեցին, իրավիճակն ավելի ու ավելի վատթարացավ: Եվ հիմա Ես անհանգստացած եմ մարմնավորված այն լուսավոր հոգիների համար, որոնք կարող են և չվերադառնալ Իմ Աշխարհ:

Միանգամայն հնարավոր է...

Աշխարհը, որն իրեն կտրում է Աստծուց, դրանով իսկ դատապարտվում է մահացման՝ աստիճանական հետընթացի ու մահվան: Մահանում է հին աշխարհը, և դրան զուգընթաց տեղ է բացվում Նոր, Աստվածային Աշխարհի համար:

Սակայն հնից Նորին անցնելու հենց այդ ժամանակն է, որ ամենավտանգավորն է լինում շատ հոգիների համար: Քանզի նրանք կորցնում են աստվածային կողմնորոշիչները և կարող են մոլորվել ու մահանալ, այդպես էլ պատրանքից դուրս գալու ելք չգտնելով:

Ներկայումս ձեր շրջակա աշխարհը հակասության մեջ է մտել Աստծո մտահղացման հետ:

Նորացման էներգիաներն առատ հոսքով ներթափանցում են ձեր աշխարհ, սակայն հին աշխարհի դոգմաները, որոնք հիմնված են նյութական էներգիաների գերիշխանության և հոգևորի նկատմամբ նյութական արժեքների գերակայության վրա, ընդդիմանում են նորացման էներգիաների հոսքին:

Սակայն երկար ժամանակով հնարավոր չէ դիմակայել Աստծո էներգիաներին:

Որքան ուժեղ լինի դիմադրությունը, այնքան կործանարար կլինեն դրա հետևանքները:

Հակընդդեմ ուժերը ներկայումս որքան ավելի շատ ջանքեր են գործադրում Աստծո Աշխարհին ու մարդկության զարգացման աստվածային Ուղուն դիմակայելու համար, այնքան ավելի ավերիչ կլինեն այդ դիմակայության հետևանքները:

Արդ, Մենք նախապես տվեցինք Մեր խրատներն այս դժվար ժամանակների վերաբերյալ:

Որ գոհեր չինեն:

Որ քիչ լինեն տառապանքները:

Սակայն Մենք չենք կարող խախտել ազատ կամքի Օրենքը. մարդկության մեծամասնությունն ընտրել է Աստծուց հրաժարվելու ուղին:

Աստծո դեմ կռիվ տալու ուղին ավերիչ ուղի է:

Ճակատամարտի ելքը կանխորոշված է:

Հին աշխարհի կործանումն անբեկանելի է:

Մեր խնդիրն է՝ հնարավորինս ավելի շատ հոգիների փրկել այս բարդ ժամանակներում:

Ուստի ձեզ Ուսմունք է տրվում:

Սիրելիներս, Ես շատ լավ եմ հասկանում, թե ձեզ համար որքան դժվար է խավարում կողմնորոշվելը, երբ հակընդդեմ ուժերը գործադրում են բոլոր ջանքերը, որպեսզի ձեզնից թաքցնեն Աստծո Ճշմարտությունը:

Կյանքի բոլոր ոլորտներն աղճատված են:

Ոչ մի տեղ ճշմարտություն չկա:

Ոչ մի կրոնում:

Ոչ մի դավանանքում:

Ոչ մի գիտական ուսմունքում:

Ահավոր ժամանակներ են:

Խավար ժամանակներ:

Սակայն հատկապես հիմա է, որ դուք առավելագույն ջանքեր պետք է գործադրեք ձեր հոգիները փրկելու համար:

Փրկվելու հնարավորություն ունեն բոլոր այն հոգիները, որոնք, անկախ արտաքին հանգամանքներից, ներքին համալարվածություն են պահպանում Աստծո Աշխարհի հետ:

Գնալով ավելի ու ավելի է դժվարանում այդ համահնչունությունը պահպանելը:

Սիրո և Հավատի վիթխարի ուժ է պահանջվում դիմանալու համար:

Պահանջվում է վերահսկել ամեն մի ցանկությունը:
Պահանջվում է Բարձրագույն Ես-ին հանձնել ամեն մի ընտրության վերահսկումը:
Պահանջվում է անդունդն անցնել ուստայնի թելի վրայով:
Ուստի, խնդրում եմ, աչքաթող մի՛ արեք Մեր խորհուրդները:
Վերընթերցե՛ք մեր Դեսպանորդի միջոցով տրված բոլոր Ուղերձները:
Անխտիր բոլորը:
Հենց դրանցում կգտնեք այն թելը, որը պատրանքի բավիղից ձեզ դուրս կհանի դեպի
Աստծո Աշխարհ:
Եվ ձեզնից յուրաքանչյուրին, ով կհաղթահարի պատրանքը, Ես կդիմավորեմ անձամբ...
Հարկավոր է, որ պահպանեք ձեր Հավատն ու նվիրվածությունը:
Ես սպասում եմ ձեզ...

ԵՍ ԵՄ Ալֆան, ձեր Երկնավոր հայրը

Վեհապետ Մորիա
22 դեկտեմբերի, 2016 թ.

Փրկությունը ձեր ձեռքերում է

ԵՍ ԵՄ Վեհապետ Մորիան...
Դուք սպասում էիք ինձ:
Դե ինչ, ես ահա եկել եմ...
Որքան շատ էին ձեզնից նրանք, որոնք Վեհապետների պլանների իրականացմանն էին
ապավինում:
Հույսեր էիք կապում դրա հետ, այդպես չէ՞...
Եվ հիմա մենք գալիս ենք և իրար հետևից ասում ենք ձեզ, որ Մեր հույսերը
չարդարացան, որ մեզ հակադիր ուժերը չտեսնված առավելություն ունեցան:
Վիրավորական ու ցավալի է Լույսի բազմամյա առաքելության այսպիսի տխուր
արդյունքի մասին լսելը, որը մենք իրականացրինք, ավելի ճիշտ՝ փորձեցինք իրականացնել
Ռուսաստանում:
Ձեզնից նրանց, ովքեր չեն հավատում այս տեղեկատվությանը և փորձում են ինչ-որ
հույսեր ակնկալել ապագայի հետ կապված, ես կասեմ. «Նայեցե՛ք ձեր շուրջը...»:
Վերջին տարիների ձեր բոլոր «ձեռքբերումները» տեսանելի են անզեն աչքով:
Ո՛չ կրթության, ո՛չ առողջապահության, ո՛չ սոցիալական պաշտպանության, ո՛չ էլ
հոգևոր ասպարեզներում որևէ դրական փոփոխություն չկա:
Մենք պարտություն կրեցինք այս հարյուրամյակի ամենավճռորոշ ճակատամարտերից
մեկում:
Ի՞նչ անել, ուրեմն...
Աստված, սիրելիներս, ցանկացած իրավիճակից միշտ կարող է գտնել այն ելքը, որը
կհամապատասխանի զարգացման էվոլյուցիոն ուղուն:
Հակադիր ուժերը հաղթեցի՞ն...
Հիասթափե՛ք է:
Դա թվացյալ հաղթանակ է:
Աստծուն հաղթել հնարավոր չէ:
Աստծո դեմ ուղղված ցանկացած գործողություն ուժեղացված հակազդեցության է
հանգեցնում նրա դեմ, ով կատարել է այդ գործողությունը:
Իշխող ընտրանին հրաժարվե՛ց հասարակության կառավարման աստվածային
սկզբունքներից:
Մահկանացու մարմնում անմահության հասնելու մասի՞ն են բառբառում:
Նյութական արժեքներն ավելի բա՞րձր են հռչակում հոգևոր արժեքներից:

Հիասթափ է:

Օրենքը կգործի անողորք և անբեկանելի:

Ամենայն ինչ, որ կտրված է Աստծուց, չի կարող հարատևել քիչ թե շատ երկարատև պատմական ժամանակով:

Խավարի ուժերը որքան շատ են դրսևորում իրենց, այնքան մոտեցնում են իրենց վախճանը:

Ինչպե՞ս դա վրա կհասնի... Թույլ տվեք չպատասխանել այդ հարցին:

Նրանք, ովքեր իրենց թույլ տվեցին իջնելու գիտակցության անասնական մակարդակին, իրենց գոյությունը կավարտեն անձավներում ու անտառներում: Եվ մի քանի հազար տարի հետո նոր մարդկությունն այդ նոր նեանդերթալցիների կմախքների մնացորդները կգտնի երկրագնդի դժվարամատչելի վայրերում:

Իսկ ի՞նչ անեն նրանք, ովքեր իրենց լուսակիրներ են համարում և հիմա խելակորույս կանգնած են նոր իրականության առջև...

Ձեր խնդիրը նույնն է մնացել:

Դուք պետք է գործեք, գործեք և էլի՛ գործեք...

Ձեր ժամանակներում միայն աղոթքներով ու ներխոսկումներով անձնական փրկության հասնել հնարավոր չէ:

Պահանջվում է սպասավորություն, պահանջվում է օգնել դրա կարիքն ունեցողներին:

Դուք պետք է մտահոգվեք սպազայի համար:

Այս պայմաններում չեն կարող մարմին առնել զարգացած հոգիները:

Այս պահին Երկրի վրա, հատկապես խոշոր քաղաքներում ստեղծված պայմանները կարող են դեպի իրենց քաշել միայն հետամնաց էվոյուցանների հոգիներին:

Արդ, որպեսզի կարողանան մարմին առնել արժանավոր, առաջադեմ և հոգեպես բարձր զարգացած հոգիները, դուք պետք է հենց այժմվանից մոլորակի վրա պայմաններ ստեղծեք նրանց գալստյան համար:

Ապագա ծնողների նախապատրաստման յուրաքանչյուր քայլը, սկսած սաղմնավորումից և վերջացրած դաստիարակությամբ ու կրթությամբ, պետք է մանրակրկիտ ձևով կշռադատվի:

Ինքներդ որոշեք, թե այդ գործով որտեղ կզբաղվեք՝ առանձնացված նոր բնակավայրերում, թե՛ արդեն գոյություն ունեցողներում:

Միայն ասեմ, որ խոշոր քաղաքների պայմանները բոլորովին չեն համապատասխանում մարդկության սպագա փրկիչների գալստյանը:

Ձեր խնդիրն է՝ ստեղծել հիմնահարթակ, յուրատեսակ նոյան տապան, որ կարողանաք պահպանել բանական մարդու գենոֆոնդը:

Նշանակություն ունի ամեն ինչը՝ սնունդը, ջուրը, կենսապայմանները, ուսուցումը:

Եթե անհրաժեշտ պայմաններ սպահովվելու համար հարկ լինի գնալ անտառ, սպա պետք է գնաք անտառ:

Եթե պայմաններ ստեղծելու համար հարկ լինի նոր օրենքներ գրել, սպա պետք է մտնեք քաղաքականության մեջ և հասնեք այդ օրենքների ընդունմանը:

Ներկա ժամանակում դուք չեք կարող սպահովել ձեր անձնական փրկությունը՝ չօգնելով համայն մարդկությանը:

Այդ դեպքում ձեր անցողիկ բալերն ուղղակի չեն հերիքի Երկնային Արքայություն մուտք գործելու համար:

Ուստի պատրաստվե՛ք գործել:

Միաբանվե՛ք:

Թևքներդ քշտե՛ք:

Հատկապես հիմա՛ է պետք ինքնագոհողության գնալ հանուն մարդկության սպագայի:

Փրկությունը հենց ձեր ձեռքերում է:

Մի՛ սպասեք կետ առ կետ ցուցումների:

Անհապաղ գործի՛ անցեք:

ԵՍ ԵՄ Վեհապետ Մորիան...

Մանատ Կումարա
20 հունիսի, 2017 թ.

Ներկայումս միայն ձեր ջանքերից է կախված մարդկության ապագան

ԵՍ ԵՄ Մանատ Կումարան:

Ես ահա եկել եմ:

Որքան էլ դժվարին լինեն մոլորակի պայմանները, Մենք ձեզ օգնության ենք շտապում:
Եվ մեր ամեն մի հանդիպման ժամանակ ձեզ ենք մեկնում Մեր օգնության ձեռքը:

Անփոփոխ կերպով:

Մշտապես:

Աշխարհների միջով:

Այսօր Ես եկել եմ, որպեսզի պատասխանեմ այն հարցին, որը մտովի կամ բարձրաձայն հնչեցնում են ձեզնից շատերը. «Ի՞նչ անել... Կա՞րողյոք որևէ ելք այն փակուղուց, որին այժմ դեմ է առել մարդկությունը»:

Պաշտելիներս, Ես չեմ հոգնում կրկնելուց, որ ցանկացած իրավիճակից միշտ կա աստվածային ելք, և ցանկացած խնդիր ունի իր աստվածային լուծումը:

Եթե այդ ելքն ու այդ լուծումը չլինեին, ապա Մենք այսքան ջանք ու էներգիա չէինք ծախսի, որ գանք ու ձեզ հասցնենք Մեր Խոսքը:

Այժմ Ես ուզում եմ ձեզ հիշեցնել, որ ներկայումս Երկրի վրա մարմնավորվել են աննախադեպ քանակությամբ լուսակիրներ:

144 000 մարմնավորված լուսակիրներից յուրաքանչյուրը ներուժ ունի հասնելու Քրիստոս-գիտակցության մակարդակին: Դուք նաև գիտեք, որ դա մարդկային գիտակցության այն մակարդակն է, որով հնարավոր է դառնում մարդկանց ամենաբարձր մակարդակի համախմբումը: Ըստ էության, գիտակցության այդ մակարդակն առավելագույն չափով մոտեցված է Համբարձյալ Դասերին:

Գիտակցության այդ մակարդակում հնարավոր է լուսակիրների ճշմարիտ Ոգեղեն համախմբում:

Դա Մուրբ Հոգու Համայնքի գիտակցության մակարդակն է: Դա նաև Երկրի վրա Լույսի Եղբայրության գիտակցության մակարդակն է:

Եվ դա է հենց այն մակարդակը, որին անհրաժեշտ է ձգտել-հասնել...

Հենց որ 144 000 լուսակիրները հասնեն Քրիստոսի գիտակցության մակարդակին և միաբանվեն Երկրի հոգևոր Եղբայրության մեջ, մոլորակի իրադրությունը կփոխվի համարյա ակնթարթորեն:

Ինչու՞ մինչև այժմ դա տեղի չի ունենում: Ինչու՞ լուսակիրները չեն կարողանում միաբանվել...

Ես կարող եմ պատասխանել այդ հարցին:

Պատճառը ձեր մեջ փնտրեք: Երբ Միասնության, Եղբայրության և Սիրո Ոգին հառնում է ձեր սրտերում, ձեր գիտակցությամբ դուք բարձրանում եք Քրիստոս-գիտակցության մակարդակին:

Ձեզնից ամեն ոք ունեցել է պայծառացման, ներքին երջանկության և Բերկրանքի այդպիսի բոլորներ:

Մակայն ամբողջ խնդիրն այն է, որ կարողանաք այդ վիճակը պահպանել հնարավորինս երկար ժամանակով. սկզբում՝ մեկ ժամ, հետո՝ ամբողջ օրվա ընթացքում, այնուհետև՝ շաբաթների, ամիսների, տարվա ընթացքում:

Այնժամ վրա կհասնի այն պահը, երբ գիտակցության այդ մակարդակը ձեզ համար բնական կդառնա, և այլևս ոչ մի պատրվակով դուք չեք ուզենա բաժանվել դրանից: Աշխարհի ոչ մի հրապուրանք այլևս ունակ չի լինի ձեզ դուրս հանելու աստվածային ներքին Ուղուց:

Իսկ հիմա եկեք միասին խորհրդածենք. ինչու՞, չնայած բոլոր ջանքերին, չի հաջողվում պահպանել գիտակցության այդ բարձր մակարդակը:

Կան աշխարհում գործող ուժեր, որոնց Մենք անվանում ենք Մեզ հակադիր ուժեր: Այդ ուժերի խնդիրն է՝ թույլ չտալ մարդկությանը, որ անցում կատարի իր էվոյուցիոն զարգացման նոր մակարդակին:

Այդ ուժերը գործում են ինչպես հենց ձեր ներսից, այնպես էլ դրսից: Ուստի, պաշտելիներս, դժվար է ոչ միայն գիտակցության արժանավայել մակարդակ պահպանելը, այլև թեկուզ կարճ ժամանակով դրան հասնելը:

Իսկ ո՞րն է ելքը...

Միայն ամենօրյա գիտակցված ջանքերի գործադրումը՝ Աստծուն մոտենալու համար...

Միայն համառությունը...

Միայն նվիրվածությունն Աստծո Կամքին...

Դուք հստակ պետք է գիտակցեք, որ ներկայումս միայն ձեր ջանքերից է կախված մարդկության ապագան:

Հարկավոր է միաբանվել անարատության ու նվիրվածության ճերմակահուր-լագուր դրոշի ներքո:

Անխտի բոլոր լուսակիրներին է դա վերաբերում...

Միշտ հիշե՛ք. միաբանվելու, համագործակցելու ունակությունը՝ Քրիստոս-գիտակցություն ձեռք բերելու հայտանիշն է:

Ջրհոսի դարաշրջանի էներգիաները՝ միաբանության, համագործակցության էներգիաներն են:

Ուստի այն ամենը, ինչ Նոր դարաշրջանի էներգիաներին հակառակ է գործում, կտրվի երկրի երեսից:

Դա անբեկանելի գործընթաց է:

Ուստի և ձեզ Ուսմունք է տրվում ընտրության մասին:

Ինքներդ եք ընտրում՝ ընթանա՞լ Ուղով, թե՞ արժանանալ խաշամի ճակատագրին:

Դա ձե՛ր ընտրության հարցն է:

Եվ այդտեղ է ձեր պատասխանատվությունը:

Աստված ամենակարող է:

Բայց Նա չի միջամտի ձեր ազատ կամքին:

Եվ եթե ձեր ազատ կամքով դուք որոշել եք ընթանալ դեպի անդունդ տանող ուղով, ապա դա ձեր ընտրությունն է և ձեր պատասխանատվությունը:

Արդեն իսկ մարմին առած 144 000 լուսակիրները, որոնք ունակ կդառնան պահպանելու իրենց Քրիստոս-գիտակցության մակարդակը, կփոխեն աշխարհը:

Կա պլան, և կա համապատասխան շարժման ուղղություն:

Ե՛վ ինքներդ ձեզ, և՛ ձեր կողքին եղածներին ամեն օր հիշեցրե՛ք գիտակցության հնարավորինս բարձր մակարդակ պահպանելու անհրաժեշտության մասին:

Ամեն օր ձգտե՛ք համախմբվել անարատության ու բարոյականության, Աստծո Կամքին նվիրվածության և դեպի լուսավոր ապագա մղվածության ճերմակահուր-լագուր դրոշի ներքո:

Ես ձեզ հաջողություն եմ մաղթում դեպի Հավերժություն տանող ձեր Ուղու վրա...

ԵՍ ԵՄ Մանատ Կումարան: ՕՄ

Տեր Շիվա

20 դեկտեմբերի, 2017 թ.

Դուք պետք է նվաճեք ձեր Հաղթանակը

ԵՍ ԵՄ Շիվան...

Այսօր՝ հենց այս կանխորոշյալ օրը, Ես եմ եկել ձեզ կարևոր Ուղերձ տալու:

Ոչ այն բանի համար, որ դա Մեզ է պետք, այլ՝ ձեզ, որ մարմին առած վիճակում եք և երբեմն բոլորովին չեք հասկանում, թե ինչ է տեղի ունենում:

Իրոք, իրավիճակը շարունակում է սրվել: Կարման խտանում և իջանում է: Տեղի ունեցողը հասկանալն ավելի ու ավելի է բարդանում:

Մենք դա գիտեինք, սիրելիներս, և ձեզ նախապես զգուշացնում էինք:

Մենք բազմիցս ենք ասել, որ ֆիզիկական ոլորտի թրթռանքները բարձրանում են: Իսկ երբ դրանք բարձրանում են, կարմայի էջքն ավելի բուռն է դառնում:

Հիշեք այն իրավիճակը, երբ փետուրե բարձր բակ եք հանում: Բարձր լրիվ մաքուր է թվում, բայց բավական է հատուկ ճիպտով ծեծեք, և բարձից անմիջապես փոշու ամպ է բարձրանում: Ահա ճիշտ այդպիսի մի բան է տեղի ունենում, երբ մենք բարձրացնում ենք ֆիզիկական ոլորտի թրթռանքների մակարդակը:

Այն ամենը, ինչ խաղաղ ննջում էր ձեր ենթագիտակցության մեջ՝ հազարավոր անցյալ մարմնավորումների դարսաշերտերը, արթնանում են և սկսում դրսևորվել ֆիզիկական ոլորտում:

Դա օրինաչափ գործընթաց է, քանզի տիեզերական ժամկետները մոտեցել են, և հասել է անցյալի կարման բեռնաթափելու ժամանակը: Ահա հենց հիմա՝ է այդ ժամանակը վրա հասել: Բանն այն է, որ նոր տիեզերական բոլորաշրջանում պետք է դրսևորվեն միայն կատարյալ էներգիաներ:

Մենք ձեզ ասել ենք ժամկետների և վրա հասնող ժամանակների մասին:

Ահա ժամանակը հասել է:

Մենք նաև ասել ենք, որ հիմա մարմին են առել մարդկության լավագույն ներկայացուցիչները: Խոսել ենք ձեր դերի և պատասխանատվության մասին: Քանզի էներգիաների համակշռությունը կարող են պահպանել միայն լավ նախապատրաստված հոգիները՝ այդ առաքելության համար հատուկ նախապատրաստվածները:

Համակշռություն պահպանելու եղանակները հայտնի են: Եվ վերջին 12 տարիների ընթացքում այս Դեսպանորդի միջոցով շատ թողության շնորհներ և Աստվածային Ողորմածություններ են տրվել, որոնք թույլ են տալիս կարմայի էջքը համակշռել աղոթքների, աղոթքային Արթնությունների և ֆիզիկական ոլորտում կատարվող ճիշտ գործողությունների միջոցով:

Տասնյակ թողության շնորհներ են տրվել, որպեսզի դրանց միջոցով առավելագույնս թեթևացվի կարմայական բեռը:

Եվ... Թողության շնորհներից ոչ մեկը չօգտագործվեց:

Պաշտելիներս, Մենք ձեզ օգնության ձեռք ենք մեկնում: Բայց Մենք չենք կարող ձեր փոխարեն ընդունել Երկնքի օգնությունը:

Ուսմունքը տրվում է մոլորակի ամենախավար ժամանակահատվածում, որպեսզի առավել լուսավոր հոգիները կարողանան դրանից օգտվել և թեթևացնել շատերի կարմայական բեռը: Մակայն ձեր փոխարեն Մենք չենք կարող գործել ֆիզիկական ոլորտում: Ձեր փոխարեն չենք կարող աղոթել:

Ես ունեմ ձեր ականջի համար անհաճո բաներ ասելու իրավունքը, քանի որ անձամբ Ես Ինքս այս Դեսպանորդի միջոցով մի քանի թողության շնորհներ եմ տվել: Բայց դրանցից և ոչ մեկը դուք չօգտագործեցիք:

Ամենավերջինը՝ 33-օրյա աղոթքային Արթնությունն էր, որն Իմ խնդրանքով տեղի ունեցավ այս տարվա աշնանը:

Մենք դրա համար ընտրել էինք կարևոր պատմական պահ և կարևոր աստղաբաշխական ժամկետներ: Կարմայական Վարչության կողմից էներգիայի վիթխարի քանակություն էր հատկացվել՝ կարմայի հարյուրամյա կուտակները բեռնաթափելու համար: Դրա մեջ մտնում էին և՛ առաջին համաշխարհային պատերազմի, և՛ Ռուսաստանի բոլշևիկյան հեղափոխության, և Ռուսաստանի ու ողջ աշխարհի հարյուրամյա անաստվածության կարմաները: Այդ կարմայական կծիկի մեջ ներգրավված էին տասնյակ առավել զարգացած երկրներ:

Պահանջվում էր Ռուսաստանից ընդամենը 1200 մարդկանց 33-օրյա մասնակցությունը, որպեսզի Երկնքի արգելապատնեշները բացվեն և փոխակերպության ենթարկվի 100-ամյա այդ կարմայի առյուծի բաժինը:

Դա մի վիթխարի թողության շնորհ էր, որը հազարապատիկ կյաթեթևացներ կարմայական ծանրաբեռնվածությունը:

Չափազանց ցավալի է, բայց այդ Արթնությանը մասնակցեցին հազիվ կեսը այն լուսակիրների, որոնց հետ Մենք նախապես հույսեր էինք կապել:

Մյուսները զանազան պատճառներ գտան գործից խուսափելու համար. մեկը ծուլացավ, մյուսը տրտնջաց դոգմաներից, որոնցից դեռ չի հասցրել ձերբազատվել, մյուսն էլ ցանկություն ու ժամանակ չունեցավ...

Երևում է, դուք պարզապես դեռ չեք հասկացել, թե ինչպիսի անդունդի առջև եք կանգնած:

Համաձայնեք, որ Մենք հնարավոր ամեն ինչ արել ենք, որ ձեզ հեռու պահենք ամենաահավորից:

Միակ բանը, որ Մենք չենք կարող անել՝ ձեր ազատ կամքին միջամտելն է:

Եթե դուք ձեր ազատ կամքով ուզում եք անդունդը նետվել, ապա Մենք չենք կարող ձեզ հետ պահել: Դա ձեր ընտրությունն է և պատասխանատվությունը:

Մա այն հունձքի ժամանակն է, երբ միայն լավագույն հոգիները կկարողանան ընթանալ հետագա էվոյուցիոն ուղով:

Ընտրությունն ինքներդ եք կատարում: Դա ձեր ընտրությունն է և պատասխանատվությունը:

Լույսի և խավարի կռիվն ընթանում է ձեզնից յուրաքանչյուրի ներսում: Ձեզ բավականաչափ չափանիշներ են տրվել, և ցուցանվել է տարբերակում կատարելու անհրաժեշտությունը:

Երբ աշակերտները պատրաստվում են կյանք մտնել, նախ ուսում են առնում և ստանում գիտելիքներ: Հետո գալիս է քննություն հանձնելու պահը: Եվ ամեն աշակերտ ցուցադրում է իր ուսումնառության չափը:

Ստացած գիտելիքները նրա համար օգտակար են լինում ամբողջ կյանքի ընթացքում: Իսկ եթե աշակերտներն անփույթ են և չեն ուզում սովորել, ապա նրանք գրկվում են զանազանելու և շարժման ուղղությունը հասկանալու կարողությունից: Նրանց վիճակվում է խավարում անընդհատ դեսուդեն ընկնել և ելք որոնել:

Բոլոր գիտելիքները տրված են, ուղենիշները՝ սահմանված:

Օրինակ՝ ասվել է այն մասին, որ Ուսմունքն անպայման պետք է ամրապնդել գործնական աշխատանքով և այն կիրառել կյանքում, որովհետև Ուսմունքը հենց Կյանքի համար է:

Ասվել է գործելու անհրաժեշտության մասին, բայց նաև ասվել է, որ այդ գործունեությունը պետք է ճիշտ շարժառիթներ ունենա: Այլապես ձեր բոլոր գործողությունները լրացուցիչ կարմա կստեղծեն:

Դուք մեզ չեք կարող հանդիմանել, թե այս ամենադժվար ժամանակներում Մենք ձեզ լքել ենք և չենք ցուցաբերել ամբողջ անհրաժեշտ օգնությունը:

Ամեն ինչ տրվել է, և տրվել է բաց ու թափանցիկ՝ ժամանակի ներկա փուլի համար հնարավոր ամենամատչելի ծավալով:

Իսկ հիմա ժամանակը փոխվել է:

Կարման այնքան է խտացել, որ դուք Մեզ արդեն չեք լսում:

Վրա է հասել ուղու ամենադժվարին շրջանը: Հոգիներից յուրաքանչյուրը պետք է միայնակ թռիչք գործի:

Միայն ամենաուժեղներն ու խիզախները, անշահախնդիր ու նվիրյալ հոգիները կկարողանան ապացուցել էվոյուցիան շարունակելու իրենց իրավունքը:

Իսկ Մենք հեռու ենք քաշվում: Չի իմաստ չունի ինչ-որ բան ցույց տալ, երբ մարդիկ չեն տեսնում: Իմաստ չունի ինչ-որ բան ասել, երբ մարդիկ չեն լսում: Եվ իմաստ չունի թողություն շնորհել, երբ դրանից օգտվող չկա:

Ես մաղթում եմ, որ ձեր մեջ ուժ գտնեք վերահաս բոլոր փորձություններին դիմակայելու համար:

Աշխատեք հիշել Մեր բոլոր խորհուրդները:

Ձեզ կփրկեն Հավատը և Մերը:

Խավարն անուժ է: Այն սնվում է ձեր էներգիայով:
Արժե՛ արդյոք սնունդ տալ անկատարությանը:
Դուք պետք է նվաճեք ձեր Հաղթանակը...
Մաղթում եմ, որ հաղթեք...

ԵՍ ԵՄ Ճիվան... Միշտ Հաղթանակ...

Սանատ Կումարա
20 հունիսի, 2018 թ.

Մեր Առաքելությունը Ռուսաստանում ավարտված է

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան: Այսօրվա իմ գալուստը, սիրելիներս, պայմանավորված է Կարմայական Վարչության նիստից ձեզ վերջին յուրեր հաղորդելու անհրաժեշտությամբ:

Ինձ տխուր պարտականություն է վիճակվել ձեզ տեղեկացնելու, որ Մեր Առաքելությունը, որը Մենք վերջին 14 տարիների ընթացքում Ռուսաստանում իրականացնում էինք Մեր Դեսպանորդի միջոցով, ավարտված է:

Կարմայական Վարչությունն ստիպված էր նման որոշում ընդունել, քանի որ Ռուսաստանի բնակիչներին Մեր Ուսմունքը հասցնելու Մեր բազմամյա փորձերը հաջողությամբ չպսակվեցին, ինչպես նաև մերժվեցին Մեր բոլոր նախաձեռնությունները:

Ֆիզիկական ոլորտում դրա հաստատումը եղավ այն, որ Մեր Դեսպանորդի Աշրամը պղծվեց և բազմակիորեն հրի մատնվեց այն ամենը, ինչը երկար տարիների ընթացքում ստեղծված էր այդքան դժվարությամբ:

Նման պայմաններում Մենք չենք կարող շարունակել Մեր Առաքելությունը: Ես ձեզ ավելին կասեմ՝ մոտ ապագայում ոչ մի դեսպանորդ այլևս չենք առաքի Ռուսաստան, և Լույսի ոչ մի առաքելություն չենք իրականացնի Ռուսաստանում: Եվ դա միանգամայն արդար կլինի: Արդյո՞ք դուք կշարունակեիք կրկին ու կրկին բախել այն տան դուռը, որից ձեզ ամենակոպիտ ձևով ամեն անգամ հեռու են քշում...

Մենք երկար տարիների ընթացքում փորձում էինք բախել ռուսաստանցիների սրտերը: Բայց ստանում էինք միայն այնպիսի պտուղներ, որոնք վկայում էին Մեր մերժված լինելու մասին: Մեր բոլոր ջանքերն ապարդյուն էին անցնում:

Ինչպես արդեն գիտեք Մեր Ուղերձներից, Մեր Դեսպանորդի օգնությամբ Մենք փորձեցինք մարդկությանը տալ ամենալավ, ամենակատարյալ Ուսմունքը, որը տվյալ պահին մարդկությունն ունակ կլիներ ընկալել: Մանրագին կերպով ընտրվել էին պատմական ժամկետներն ու ջանքերի գործադրման վայրը: Այս անգամ դա Ռուսաստանն էր: Մենք հույս ունեինք, որ այդ երկրի ժողովրդին բնորոշ հավատի և Բարձրագույն Օրենքին նվիրված լինելու հատկանիշների շնորհիվ Մեզ կհաջողվի ցույց տալ քաղաքակրթության զարգացման այլ ուղի՝ հիմնված ոչ թե հաճույքների ու սպառման պաշտամունքի վրա, այլ բարձրագույն հոգևոր արժեքների, հավատի ու սիրո վրա:

Մենք Մեր ուժերի ներածին չափ ամեն ինչ արեցինք, պաշտելիներս: Եվ Մեր Դեսպանորդին ևս հանդիմանելու որևէ առիթ չունենք: Նա աննահանջ դիմակայեց բոլոր հարձակումներին ու ուխտադրուժ գործողություններին:

Սակայն մենք չենք կարող գործել ձեր ազատ կամքին հակառակ: Ռուսաստանի ժողովուրդների հավաքական գիտակցությունը կատարեց իր ընտրությունը, և այդ ընտրությունը, ավաղ, կապված չէ այն աստվածային Ուղու հետ, որը մենք ուսուցանում ենք Երկրի մարդկությանը:

Ուստի Մենք հիմա հեռանում ենք: Մենք այլևս չենք փորձի կրկին ու կրկին բախել ամրապինդ փակված ձեր սրտերի դռները:

Իսկ ի՞նչ կլինի դրանից հետո... Կսկսի գործել մե՞ծ ու արդար օրենքը՝ Կարմայի Օրենքը:

Երբ մարդիկ ականջ չեն դնում Մեր խրատներին, մերժում ու հալածում են Մեր դեսպանորդներին, դրանով իսկ կարմա են կուտակում իրենց գլխին: Մենք բազմիցս ասել ենք, որ Մեր Դեսպանորդի դեմ գործելու կարման հավասարաբեք է Աստծո դեմ գործելու կարմային: Իսկ դա Երկրի վրա եղած կարմայի տեսակներից ծանրագույնն է:

Ահա և վրա է հասնում այդ կարմայի էջքի ժամանակը:

Կլինեն տառապանքներ, աղետներ, դժբախտություններ, պատերազմներ, կորուստներ, սով, հիվանդություններ...

Տառապանքները երբեմն մաքրում են մարդկանց հոգիները, և դա ժամանակի ընթացքում կարող է նոր հնարավորություն բացել:

Բայց հիմա Մենք հեռանում ենք և այլևս չենք բախի այն տան դուռը, որից Մեզ հեռու են քշում ու հալածում:

Կարմայի էջքի ժամանակն է հիմա: Սակայն Մենք երբեք դուռը չենք շրխկացնում ձեր առջև: Մենք միշտ Մեր դուռը մի փոքր կիսաբաց ենք պահում:

Դեռևս կա իրավիճակը փոխելու մի հնարավորություն: Եվ դա կապված է այն մարդկանց հետ, որոնք որոշակի հոգևոր նվաճումների են հասել: Ուսմունքը բոլորի համար լրիվ ձրի է, և ամեն ոք այն կարող է օգտագործել իր հայեցողությամբ: Սակայն ձեր մեջ կան հոգիներ, որոնք անցած մարմնավորումների ընթացքում արդեն հասել են որոշակի հոգևոր նվաճումների: Նրանք Ոգու ասպետներ են, Լույսի մարտիկներ...

Միայն դո՛ւք կարող են փոխել իրավիճակը: Ձեր գործելու հերթն է հիմա...

Դուք պարտավոր եք պաշտպանել Մեր Դեսպանորդին: Նրա ուղղությամբ արձակված ստի ու կեղծիքի ցանկացած նետ պետք է բախվի ձեր Ճշմարտության վահանին:

Չրպարտության ամեն մի շոշափուկ պետք է հատվի ձեր Ճշմարտության սրով:

Հակադիր ուժերի ամեն մի խարդավանք ու հարձակում պետք է հետ մղեն Մեր դրոշների տակ համախմբված մարտիկները:

Դավաճանությունն ամենածանր մեղքերից մեկն է: Ձեր ընտրության ժամն է. անձնուրացաբար ամեն զնով կպաշտպանե՞ք արդյոք Աստծո Ճշմարտությունը, թե՞ կձևացնեք, թե դա ձեզ չի վերաբերում, և ձեր վախկոտությունն ու ծուլությունը կբողարկեք հանգամանքների նկատմամբ ունեցած ձեր սիրով ու հնազանդությամբ...

Կրկնում եմ ևս մեկ անգամ՝ հոգևոր Ուղու որոշակի փուլում դուք պետք է պաշտպանեք Ճշմարտությունը:

Եթե դուք դա չանեք, ապա ձեզ համար դա հավասարագոր կլինի դավաճանության: Ներկա ժամանակահատվածում՝ դա իրադարձությունների ընթացքը դեպի լավը փոխելու միակ հնարավորությունն է:

Աստված հայիոյանք չի ընդունում: Ուստի ավել բարձր պատիվ չկա, քան ձեր աշխարհում Բարձրագույն Օրենքը պաշտպանելն է:

Ընտրությունը ձերն է՝ անմահությունը կրնտրեք, թե՞ ձեր անցողիկ աշխարհը:

Մենք ավարտեցինք Մեր Առաքելությունը Ռուսաստանում: Եվ հիմա նրանց գործելու հերթն է, ովքեր մինչ այժմ լսում էին Մեր խոսքերը, կարդում Մեր Ուղերձները, բայց ոչինչ չէին ձեռնարկում:

Եկել է ժամանակը, որ ցույց տաք, թե ինչպես եք յուրացրել Մեր Ուսմունքը: Ձեր մեջ կա՞ն արդյոք Հավերժական Կյանքին արժանիներ:

Կատարեցե՞ք ձեր պարտքը...

Իսկ Ես ավարտում եմ իմ Ուղերձը:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան: ՕՄ

Տեր Մայտրեյա

19 դեկտեմբերի, 2018 թ.

**Ձեռնադրումների Ուղին միշտ բաց է այն հոգիների համար,
որոնք հավատարիմ են Աստծուն և Վեհապետներին**

ԵՍ ԵՄ Մայտրեյան՝ Երկնքի մեծ Ողորմածությամբ կրկին ձեզ այցի եկածս: Մեր հաղորդակցության քաղցր բույրներն ապրելն այնքա՛ն հազվադեպ է... Եվ ահա այս անգամ Ես եկել եմ բացառապես տիեզերական Բարեգթության ու Կարեկցության շնորհիվ: Չի Համբարձյալ Դասերը գիտեն, թե որքա՛ն ծանր է մարմնավորված լուսավոր հոգիների վիճակը, երբ խավարն ավելի ու ավելի է խտանում:

Ես հիշում եմ մեր Դեսպանորդի միջոցով կայացած մեր առաջին հանդիպումները: Հիշու՛մ եք, թե ինչպես ձեզ հրավիրեցի իմ Ձեռնադրումների Դպրոցը: Օ՛, դա անմոռանալի էր... Չհամբարձված սաներին հատկացված դասարանը լեփ-լեցուն էր դիմորդների հոծ խմբով:

Սակայն տարեցտարի դասարանում տեղերը դատարկվում ու դատարկվում էին, մինչև որ վերջին աշակերտները լքեցին նուրբ ոլորտի Իմ մենաստանում գտնվող Դպրոցը:

Մեկը պարզապես մոռացավ, որ գրանցվել է Ձեռնադրումների Իմ Դպրոցում, մյուսը գտավ մի այլ, ավելի հեշտ ուղի, մի ուրիշն էլ գործեց ամենասահավոր մեղքը՝ դավաճանություն:

Իմ Դպրոցի դռներն առաջվա պես լայնորեն բաց են: Սակայն այլևս չկան Ինձ մոտ ուսանելու ցանկություն ունեցողներ:

Նրանք, ովքեր լքեցին Իմ Դպրոցը, իրենց այս մարմնավորման ընթացքում այլևս չեն կարողանա հետ վերադառնալ: Նախկին աշակերտների մեծամասնությանը հարկ կլինի ևս 7 մարմնավորում անցնել, որ կրկին հնարավորություն ստանան ուսանելու Ձեռնադրումների Դպրոցում:

Իսկ նրանք, որ դավաճանության ծանր մեղքը գործեցին, ամենայն հավանականությամբ այլևս երբեք չեն կարողանա ուսում ստանալ Իմ անձնական ղեկավարությամբ:

Վիթխարի աստվածային հնարավորությունը ձեռքից բաց է թողնված: Սակայն այսօր Ես չեմ եկել, որ ձեզ ամոթանք տամ և վիատության գիրկը նետեմ: Իմ խնդիրն է՝ ձեզ բացատրել, թե ինչ հետևանքներ են ունենում ձեր կատարած ընտրությունները: Մարդկությունը շատ կարճ հիշողություն ունի, ուստի շատ քչերն են ունակ նկատելու այն կապը, որ գոյություն ունի սեփական նախընտրանքների և դրանց հետևանքների միջև:

Քաղաքակրթության հետագա ընթացքը որոշող ընտրությունները կատարում են, որպես կանոն, մարդկության առաջադեմ մասի ներկայացուցիչները՝ մարմնավորվածներից լավագույնները: Ներկայումս այդ ընտրություններն արդեն կատարված են, և դուք անխուսափելիորեն կբախվեք դրանց հետևանքների հետ:

Տառապանքները մաքրում են հոգին և բացում նոր հնարավորություն:

Ապաշխարանքն ու գղջումը կիսով չափ թեթևացնում են կարմայական բեռն ու տառապանքները:

Համբարձյալ Դասերը մշտապես ձեր կողքին են: Ոչ մի պարագայում մենք չենք լքում ձեզ: Սակայն հենց ինքներդ եք ձեզ հեռացնում Աստծուց և Համբարձյալ Դասերից: Այդ կտրվածությունը ձեզ գրկում է աստվածային գիտակցության վիճակներից՝ Բերկրանքից, Սիրուց, Անդորրից ու Ներդաշնակությունից:

Մենք ոչ մի տեղ չենք հեռացել:

Մենք մշտապես ձեզ հետ ենք:

Սակայն հիմա ձեզնից ավելի շատ ջանքեր կպահանջվեն, որպեսզի լսեք Մեզ և հասկանաք Մեր Ուսմունքը:

Եթե ձեր աշխարհից համանման օրինակ բերելու լինենք, ապա անցած 14 տարիների ընթացքում Մեր Դեսպանորդի միջոցով Մեր Ուսմունքը տալով ձեզ ներկայացրինք դրա «արեգենտացիան», ինչպես դա ընդունված է ձեր ցուցահանդեսներում ու խանութներում:

Մենք ընդհուպ մոռեցանք ձեզ և ներկայացրինք Մեր Ուսմունքը: Ես ինքս այս Դեսպանորդի միջոցով երեք միջոցառում անցկացրի, որոնց ընթացքում ոչ միայն դրսևորեցի Իմ ներկայությունը, այլև տվեցի Իմ Օրհնությունը: Այնաստի միջոցով Ես

ազդակ հաղորդեցի ձեր ներքին էությանը, որն ունակ էր արթնացնելու ձեր Աստվածայնությունը, ձեզ մղելու դեպի Ներքին Ուղին և դրանով ընթանալու:

Հարյուրավոր մարդիկ ստացան Իմ այդ ազդակն ու Իմ պատգամը: Սակայն ստացված աստվածային Էներգիան, ավանդ, ծախսվեց ո՛չ աստվածային գործերի համար...

Մեր Դեսպանորդի միջոցով Մենք ընդհուպ մերձեցանք չհամբարձված մարդկությանը: Բավականաչափ ամբողջական ձևով ներկայացրեցինք Մեր Ուսմունքը: Եվ հիմա, երբ բոլոր ընտրություններն արդեն կատարված են, Մեր Ուսմունքը պարունակող գրքերը Մենք կդնենք ամենաբարձր դարակի վրա՝ երբևէ մարդկությանը տրված ամենաբարձր ուսմունքների կողքին:

Հիմա արդեն ինքներդ պետք է ուղիներ փնտրեք Ուսմունքը ձեզ մատչելի դարձնելու համար:

Մարդկությունը չի գնահատում այն, ինչ տրվում է ազատ ու ձրի:

Դե ինչ, խիզախեք և գիտելիքներ ձեռք բերեք սեփական ջանքերի գնով:

Մոտ 12 տարի առաջ այս Դեսպանորդի միջոցով Ես դիմեցի ռուսաստանաբնակներին և խնդրեցի հոգալ Մեր Դեսպանորդի համար:

12 տարի անցնելուց հետո ի՞նչ արդյունք ունենք...

Տունը, որտեղից տրվում էին Մեր Ուղերձները, և որը Մեր Դեսպանորդն ինքն էր կառուցել, հրդեհի ճարակ դարձավ:

Աշրամը, որը Մենք 5 տարիների ընթացքում ողողել էինք Լույսով, պղծվեց ու կործանվեց:

Ռուսաստանի հողում տեղակայված մեր առաջնադետքը վերացվեց:

Տխու՛ր արդյունք է...

Եվ շա՛տ ափսոս, որ մարդկության լավագույն ներկայացուցիչներն իրենց նախապատվությունը տվեցին ո՛չ այն ուղուն, որը մարդկությանն ուսուցանում ենք Մենք՝ Համբարձյալ Դասերս:

Սակայն Ես ձեզ պետք է հիշեցնեմ, որ Ձեռնադրումների Ուղին անհատական բնույթ ունի: Դա այն Ուղին է, որը ձեր հոգիներին հնարավորություն է ընձեռում մեկ մարմնավորման ընթացքում հասնել էվոյուցիոն զարգացման հաջորդ մակարդակին: Եվ այդ Ուղին հիմա էլ է բաց՝ անկախ ամեն ինչից: Քանի որ արտաքին հանգամանքներն ավելի ու ավելի են խստանում, ապա Ուղու վրա ունեցած ձեր ձեռքբերումները ևս, անկախ արտաքին հանգամանքներից, բազմակիորեն աճում են:

Եթե նույնիսկ համայն մարդկությունը վստահաբար ընթանա դեպի անդունդ, ապա ձեր խնդիրն է՝ ապավինել ձեր ներսի Աստծուն և դժվարին իրավիճակներում վարվել ձեր Խղճի թելադրանքով:

Այլընտրանքը մեկն է՝ կա՛մ ընտրում եք ձեր հոգու անմահությունը, կա՛մ ձեր մարմնի համար ապահովում եք կուշտ ու հարմարավետ կյանք:

Տեղի է ունենում այն, ինչին հավատում եք:

Եթե հավատում եք Աստծուն և Համբարձյալ Վեհապետներին, ապա վաղ թե ուշ կլինեք Մեզ հետ:

Եթե ընտրում եք խաբկանքներով ու հրապուրանքներով լի արտաքին պատրանքային աշխարհը, ապա կմնաք այդ աշխարհում, որը կավարտի իր գոյությունը:

Մեր Ուսմունքի էությունը շատ պարզ է: Սակայն այդ էությունը հասկանալու համար պետք է ունենալ որոշակի էներգետիկական մակարդակ:

Միայն նախընտրանքների պատճառով դուք ստեղծում եք կարմա կամ էներգետիկական պատնեշ, որը ձեզ հեռացնում է Մեր աշխարհից:

Այս փուլի ձեր խնդիրն է՝ վերադառնալ գիտակցության աստվածային վիճակներին: Ձեռնադրումների Ուղին բաց է բոլոր այն հոգիների համար, որոնք հավատարիմ են Աստծուն և Վեհապետներին:

Իմ այս Ուղերձին հատկացված աստվածային Ողորմածությունն սպառված է, և Ես ձեզ հրաժեշտ եմ տալիս:

Միայն մարդկության նկատմամբ իմ Մերը թույլ տվեց, որ դրսևորվի այս Ուղերձի փոխանցման հրաշքը:

ԵՍ ԵՄ Մայրեյան

Էլոհիմ Կիկլոպետս

20 հունիսի, 2019թ

Ես ձեզ արթնացման կանչ եմ հղում՝ դեպի Նոր Օր և նոր իրականություն

ԵՍ ԵՄ Էլոհիմ Կիկլոպետսը:

Իմ այսօրվա գալուստը կապված է վերջին ժամանակներում տեղի ունեցած իրադարձությունների մի ամբողջ շղթայի հետ:

Դրանցից նույնիսկ ամենակարևորները շարադրելու համար հարկ կլինի, որ չափից դուրս իջեցնեմ Իմ թրթիռները, իսկ դուք ստիպված կլինեք ձեր գիտակցությամբ հնարավորինս մերձենալ Ինձ:

Եվ այսպես, մեզ վիճակված է վեր կանգնել առօրյա ունայնից և մեր հայացքը հառել Երկրում տեղի ունեցող իրադարձությունների վրա:

Ես պահպանում եմ Աստծո Տեսլականը մոլորակի իրավիճակի համար: Սակայն ձեզ հայտնի է, որ առանց Եղբայրության Երկրի վրա մարմին առած ներկայացուցիչների՝ Մեզ համար դժվար է իրականացնել մոլորակի համար նախատեսված աստվածային պլանը:

Վիթխարի աստվածային թողության շնորհիւ, որն սկզբնավորվեց 15 տարի առաջ, նպատակ ուներ փոխել մոլորակի քաղաքակրթության զարգացման ընթացքը և այն ուղղել դեպի աստվածային հուն:

Այդ խնդրի իրականացման համար Եղբայրության Սրբազան Մենաստաններում նախապատրաստություն էին անցել լավագույն հոգիներ: Նրանք համապատասխան ուսուցում էին անցել և վառվում էին իրենց բոլոր ուժերն ու ունակությունները գործի դնելու ցանկությամբ, որպեսզի Երկիր մոլորակի հնարավորինս մեծ քանակությամբ հոգիների կարողանան օգնել հնարավորինս շուտ դուրս գալու զարգացման աստվածային ուղի:

Դրա համար պահանջվում էր ամենասեղմ ժամկետներում ընդօրինակման նմուշ ստեղծել ֆիզիկական ոլորտում, որին հետևելով հնարավոր կղաճար մոլորակում տարածել նշարիտ կերպեր՝ նախ և առաջ երեխաների կրթության ասպարեզում:

Սակայն համայն Տիեզերքում գործող հիմնական օրենքներից մեկը՝ դա Ազատ Կամքի Օրենքն է: Մարմին առած անհատն ընտրություն է կատարում և որոշում է կայացնում՝ ելնելով այդ Օրենքից: Եվ նույնիսկ այնժամ, երբ Մենք հստակ տեսնում ենք, որ տվյալ հոգին սխալ ընտրություն է կատարում և շեղվում մարմնավորումից առաջ իր իսկ ընդունած աստվածային պլանից, Մենք չենք կարող միջամտել:

Ցավալի է գիտակցել կարմայի բեռի ողջ ծանրությունը, որն ընկավ այդ մարդկանց ուսերին:

Մենք շարունակում ենք պահպանել Աստծո այն Տեսլականը, համաձայն որի՝ մոլորակի էվոլյուցիան դեպի աստվածային ուղի պետք է սկսվի այն տարածքից, որը ներկայումս զբաղեցնում է Ռուսաստանը:

Սակայն մի շարք մարդկանց նախընտրանքների շարանը հանգեցրեց կարմայական իրավիճակի վատթարացմանը: Այդ սխալ ընտրությունների հետևանքով մարդկանց գիտակցությունը նեղացավ: Նեղացավ այնքան, որ բազմաթիվ հոգիներ չեն հասկանում, թե ինչ է կատարվում և դեպի ուր մղվել:

Շատերն ունակ չեն ամբողջովին ընկալելու Մեր Ուղերձներն ու Մեր առաջնորդությունը:

Ստեղծված իրավիճակում չի հաջողվի խուսափել կորուստներից, աղետներից ու դժբախտություններից: Հավանականություն կա, որ իր աստվածային առաքելությունը չկատարած Ռուսաստանն իր ներկայիս տեսքով այլևս կդադարի գոյություն ունենալ:

Բայց դա չի նշանակում, որ Մենք հրաժարվել ենք այդ երկրի և համայն մարդկության համար նախատեսված Մեր պլաններից:

Նոր Դարաշրջանն իր նոր էներգիաներով անկասելիորեն ներխուժում է Երկիր մոլորակի կյանքի մեջ:

Հին էներգիաներն ու կառավարման հին եղանակները դատապարտված են կործանման:

Լուսակիրների նոր սերունդը՝ 21-րդ դարի սերունդը, արդեն նախապատրաստված է մեր Սրբազան Մենաստաններում: Հենց հիմա վրա է հասնում այն ժամանակը, երբ այդ սերունդն իր գործուն տարիքի մեջ է մտնում:

Այդ հրեղեն հոգիները զուրկ են այն դոգմաներից, որոնք կաշկանդում էին նախորդ սերունդներին: Նրանք պատրաստ են բարեփոխություններին, և հենց Նոր Դարաշրջանի էներգիաներն են երիտասարդությանն առաջ մղում, որ աստվածային փոփոխություններ իրականացնեն մարդկային կյանքի բոլոր բնագավառներում:

Սակայն քանի որ նախորդ սերունդը չհոգաց մանուկների ու երիտասարդության դաստիարակության համար, ապա գլխավոր վտանգը, որ սպառնում է երիտասարդ սերնդին՝ այն հրապուրանքներն ու գրավչություններն են, որոնք քմայքներ են հարուցում և ծնում ոչ աստվածային սովորություններ ու կապվածություններ: Որքան դժվար են լինում փորձությունները, այնքան շատ ձեռքբերումներ է ունենում հոգին՝ անցնելով այդ փորձություններն ու հաղթանակ տոնելով պատրանքային դրսևորումների նկատմամբ: Նոր սերնդի կողմից ճիշտ ընտրություններ կատարելուց մի քանի տարի հետո կարող է բացվել նոր աստվածային հնարավորություն:

Մենք անհամբեր սպասում ենք, թե լուսակիրների նոր սերունդը երբ կյանք կմտնի և իր իր վրա կվերցնի լիակատար կարմայական պատասխանատվություն: Մկսվում է հաջորդ կոսմիկական բոլորաշրջանը: Էլ ավելի հզոր էներգիաներ են մուտք գործում Երկիր: Այդ պայմաններում, երբ առկա են Նոր Դարաշրջանի էներգիաները, կկարողանա գոյատևել միայն այն, ինչն ամեն ինչով բավարարում է աստվածային սկզբունքներին:

Եղբայրության Սրբազան Մենաստաններում ներկայումս մարմնավորման է պատրաստվում լուսակիրների նոր խմբաքանակ: Ուստի Ես չեմ հոգնում կրկնելուց, որ մարմնավորվածներիդ վրա կարմայական պատասխանատվություն է դրված այդ հոգիներին ընդունելու և դաստիարակելու համար:

Ուսմունքի ամրակուռ հիմքն արդեն առկա է մոլորակում: Սակայն պահանջվում է հոգածություն և խնամք տաժել նոր սերնդի մարդկանց նկատմամբ, որոնց առաքելությունը մոլորակն ամբողջությամբ փոխելն է:

Մարմնավորված և սխալ ընտրություններ կատարած շատ հոգիներ հիմա արդեն զոջում և ցանկանում են գործով շտկել իրենց թույլ տված սխալները: Պաշտելի Գուան Ինը՝ Բարեգթության ու Կարեկցանքի Աստվածուհին, արդեն հարց է մտցրել ներկայումս ընթացող Կարմայական Վարչության նիստում, որ թեթևացվի զոջացող այդ հոգիների կարմայական բեռը:

Միտելիներս, դուք մարմնավորվել եք, որպեսզի գիտակցեք ձեր անմահ էությունը և հաղթեք պատրանքային ուժերին: Ձեզնից ամեն ոք պետք է հաղթանակ տոնի պատրանքային դրսևորումների նկատմամբ: Այդ հաղթանակը պետք է լինի ձեր թերությունների, ձեր գիտակցության ոչ աստվածային վիճակների նկատմամբ: Եվ այդ ներքին հաղթանակը պետք է արտացոլվի ֆիզիկական դրսևորմամբ:

Որքան շատ անհատներ հաղթանակ տոնեն իրենց ներսում, այնքան ավելի արագ Երկրում կթևակոխի Ոսկեդարը:

Ես պահպանում եմ Երկիր մոլորակի Ոսկեդարի տեսլականը:

Իսկ մոլորակի այսօրվա վիճակը հիշեցնում է գիշերային մղձավանջներ:

Ես ձեզ արթնացման կանչ եմ հղում՝ դեպի Նոր Օր և նոր իրականություն...

Միշտ Հաղթանակ...

ԵՍ ԵՄ Էլոհիմ Կիկրպետսը

Մանատ Կումարա
19 դեկտեմբերի, 2019 թ.

**Նոր Ելք է սկսվում...
Հին և Էվոյուցիոն զարգացման անընդունակ ամեն բան
Կարբվի Երկրի երեսից**

ԵՍ ԵՄ Մանատ Կումարան:

Ձեզ հետ հաղորդակցության երկարատև ընդմիջումը պայմանավորված էր նրանով, որ Մենք սպառել էինք այս Տիեզերքի Բարձրագույն Խորհուրդների կողմից Մեզ շնորհված հնարավորությունը, որպեսզի հաղորդակցվեինք Երկրի մարդկության հետ:

Անհրաժեշտ է ամփոփել արդյունքները:

Իմ ամենաառաջին Ուղերձներում, որոնցով ձեզ այցի էի գալիս այս դեսպանորդի միջոցով, Ես խոսում էի այն մասին, որ մարդկությունը մոտեցել է Աստվածային Էվոյուցիոն հնարավորության անցուղու վտանգավոր սահմանագծին, որից անդին նրան անելություն է սպառնում

Համբարձյալ Դասերը մշտապես փորձում էին մարդկությանը հեռու պահել վտանգավոր նշագծից: Դրա եղանակներից մեկը՝ Մեր Ուղերձների միջոցով Երկրի մարդկության հետ հաղորդակցվելն է: Ուղերձների նպատակը՝ մարդկությանը դեպի Էվոյուցիոն զարգացման անվտանգ ուղի վերադարձնելն է:

Ես ասում էի այն մասին, որ մարդկությունը չի կարող գոյատևել, եթե ինքն իրեն կտրում է Աստծուց: Եթե Աստծուց կտրվածություն կա, ապա դա նման է քաղցկեղային ուռուցքի: Մեկական ցանկությունների ու քմահաճույքների վրա կենտրոնացած մարդկությունը, ուռնացնելով իր ցանկություններն ու կրքերը, դադարում է համապատասխանել Աստծո Մտահղացմանը և այլևս ունակ չի լինում շարունակելու իր գոյությունը:

Մենք չենք ոչնչացնում մարդկությանը: Մարդկությունն ինքն է իրեն ոչնչացնում: Գիտական բոլոր հայտնագործությունները վերածվում են սպանության գործիքների, երբ մարդկանց կյանքում տեղի է ունենում հրաժարում Բարձրագույն Բարոյական Օրենքից՝ Աստվածային Օրենքից:

Մենք մշտապես փորձեր ենք ձեռնարկում մարդկությանը վերադարձնելու դեպի Էվոյուցիոն զարգացման անվտանգ ուղի: Մեկը մյուսի հետևից Մենք գործի ենք դնում մեր առաքելությունները:

Քանի որ հիմա Ես խոսում եմ ռուս դեսպանորդի միջոցով, տեղին կլինի հիշել Ռուսաստանում վերջին 100 տարվա ընթացքում իրականացված Մեր առանցքային առաքելությունները:

Նախ և առաջ՝ դա կապված էր վերջին ռուսական ցարի Ընտանիքի հետ, որն ամբողջությամբ բաղկացած էր Մեր դեսպանորդներից:

Ի՞նչ կատարվեց այդ ընտանիքի հետ... Բոլորին սպանեցին: Եվ դեռ մինչև հիմա հրեշավոր հայհոյանքներ են տեղում անմեղ նահատակվածների հիշատակին:

Հիշենք մի այլ ընտանիք, որը մեր կողմից առաքված էր Ռուսաստան: Դա Ռերիխների ընտանիքն էր: Նրանք ստիպված եղան փախչել Ռուսաստանից, և շատ տասնամյակների ընթացքում Ռերիխ անունը չէր արտաբերվում իրենց հայրենիքում: Եվ նույնիսկ ներկա ժամանակում տեղի է ունենում Լույսի այն կիզակետի պղծում, որը Մենք ամրացրել էինք Ռուսաստանի մայրաքաղաքում բացված Ռերիխի թանգարանին:

Մենք կրկին գործի դրեցինք Մեր դեսպանորդին, որի միջոցով Ես հիմա տալիս եմ այս Ուղերձը: Եվ ի՞նչ է տեղի ունենում... Մեր դեսպանորդի Աշրամը պղծվում է ու հրդեհվում, իսկ դեսպանորդն ինքը ստիպված է լինում թափառել երկրից երկիր, քաղաքից քաղաք, մի բնակավայրից մյուսը, հանգրվանել օտար տներում ու հյուրանոցներում, ինչպես հայրենագուրկ մեկը: Չենքերի ժամանակակից տեսակներով իրականացվող կանոնավոր ու շարունակական կտտանքների ազդեցությամբ ոչնչացվում է Մեր դեսպանորդի առողջությունը:

Ահա այսպիսին է վերջին 100 տարվա ընթացքում Ռուսաստանում իրականացված Մեր առանցքային երեք առաքելությունների ընդհանուր արդյունքը:

Մենք բազմիցս ասել ենք, որ մարդկության գիտակցության մակարդակի մասին Մենք դատում ենք՝ հիմնվելով Մեր դեսպանորդների նկատմամբ ձեր վերաբերմունքի վրա: Հենց միայն Մեր պատգամաբերների նկատմամբ ցուցաբերած ձեր ակնածանքի ու հարգանքի որակի դրսևորմամբ՝ կարող էիք հասնել Էվոյուցիայի անհրաժեշտ մակարդակի: Մակայն նույնիսկ այդ, թվում է՝ հասարակ հնարավորությունը ձեռքից բաց է թողնված վերջին 100 տարիների ընթացքում:

Մենք այլևս չենք կարող շարունակել:

Տեղի է ունենում Մեր կողմից Մեր դեսպանորդի միջոցով այդքան մեծ սիրով ձեր սրտերի մեջ ներարկված էներգիայի հրեշավոր աղավաղում: Էներգիան ձեզ տրվում է, որ բարձրացնեք ձեր գիտակցությունը, ձեր մեջ զարգացնեք աստվածային հատկանիշներ և վեր բարձրանաք Էվոյուցիոն զարգացման աստիճաններով: Փոխարենը դուք այդ էներգիան շարունակաբար օգտագործում եք, որ կյանքից միայն հաճույքներ ստանաք:

Շատ Վեհապետներ գոհաբերեցին իրենց կառույցի մարմինների մասերը, որպեսզի Մեր Ուղերձների փոխանցման միջոցով պահպանվի Աստվածաշնորհի հնարավորությունը:

Իսկ ի՞նչ գոհաբերեցիք ինքներդ: Ի՞նչ արեցիք, որ պաշտպանեք մեր դեսպանորդին...

Ես հենց նոր դուրս եմ եկել Կարմայական Վարչության նիստից:

Երբեք հարցի դրվածքն այսքան սուր և դրամատիկ բնույթ չէր կրել: Ատլանտիդայի ժամանակներից սկսած՝ հարցն այդքան սուր և դրամատիկ ձևով դրված չի եղել:

Կարմայի Տիրակալները հակված են բաց թողնել կարմայի անիվը, որը վերջին տարիներին Նրանք զսպում էին աննկարագրելի ջանքերով:

Այդ անիվը ծայրեծայր կգորվի Երկրի վրայով: Արևմուտքից արևելք և հարավից հյուսիս:

Երբ ծուխը կցրվի և մոխիրը կնստի, Մենք կվերադառնանք, և, որոշ ժամանակ անցնելուց հետո, նոր քաղաքակրթության ներկայացուցիչները կկարողանան Մեզնից ուսում ստանալ:

Իմ անցած Ուղերձում ձեզ հայտնել եմ այն վերջին հնարավորության մասին, որն Իմ կողմից համաձայնեցված է Կարմայական Վարչության հետ: Ես ձեզ խնդրեցի պաշտպանել Մեր դեսպանորդին՝ որպես նշան այն բանի, որ դուք կանգնած եք մնում Հիերարխիայի աստիճանների վրա: Այդ դեպքում Հիերարխիան իրավասու կլինեք պաշտպանել ձեզ նաև հետագայում:

Մակայն ժամկետները լրացան, և Իմ շնորհած հնարավորությունը ձեռքից բաց թողնվեց: Ոչ ոքի հնարավոր չէ մեղադրել կատարվածի համար:

Այդպիսին էր այն ընտրությունը, որը վերջին 100 տարիների ընթացքում կատարեցին Ռուսաստանի լուսակիրների հինգ սերունդները:

Ինչու՞ եմ Ես խոսում միայն Ռուսաստանի մասին և չեմ հիշատակում այլ երկրներ: Բանն այն է, որ տվյալ ժամանակահատվածում Ռուսաստանը մեզ համար որպես առանցքային երկիր էր ընտրված, որի միջոցով պլանավորել էինք փոխել ամբողջ մոլորակի իրավիճակը:

Դա պայմանավորված էր ինչպես ընթացիկ պատմական պահով, այնպես էլ այդ երկրի աշխարհագրական դիրքով:

Նոր ելք է սկսվում... Հին և Էվոյուցիոն զարգացման անընդունակ ամեն բան կտրվի Երկրի երեսից:

Ձեր անհատական ընտրությունը, եթե այն ճիշտ է արված, կդրվի համաշխարհային Էվոյուցիոն փորձի ամբարում:

Երբեք մի՛ մոռացեք, որ ձեր հիմնական ընտրությունը ձեզ կա՛մ անմահ է դարձնում, կա՛մ մահկանացու: Եվ այդ ընտրությունը կապված է այն բանի հետ, թե ձեզ համար ինչն է գլխավոր՝ Աստված, թե՞ ձեր շրջապատի անցողիկ, պատրանքային աշխարհը:

Ես այս օրով եղա ձեզ հետ:

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան

Տեր Մայրեյա
19 հունիսի, 2020 թ.

Ես եկել եմ, որպեսզի մեկ անգամ ևս ձեզ հիշեցնեմ Մեր Ուսմունքի հիմնադրությունը

Ես եմ Մայրեյան: Ես եկա...

Այս բարդ ժամանակներում Ես չեի կարող չգալ, որպեսզի ուղու ամենադժվարին հատվածում նեցուկ կանգնեմ իմ նվիրյալ Բողոքաստվաներին:

Ցավոք սրտի, աշխարհը չընդունեց հեշտ ուղով գնալու Մեր ցուցումներն ու հանձնարարականները: Մենք աննախադեպ ջանքեր գործադրեցինք. Մենք և Մեր Դեսպանորդը Մեր ուժերի սահմաններում հնարավոր ամեն ինչ արեցինք, որպեսզի ֆիզիկական ոլորտին փոխանցենք այն գիտելիքներն ու հանձնարարականները, որոնցով կհեշտանար հոգիների անցումը դեպի գիտակցության ավելի բարձր մակարդակ, դեպի Նոր Դարաշրջան, Մայրեյայի Դարաշրջան, Աշխարհի Մոր դարաշրջան:

Մարդկությունը չի շտապում հրաժեշտ տալ իր կապվածություններին ու արատներին: Մենք այս Ուսմունքը բազմիցս ենք կրկնել, սակայն ժամանակի տվյալ պահին, երբ նոր էներգիաներն են մոտենում, անհրաժեշտ է մեկ անգամ ևս հիշեցնել:

Ես ուսուցանում եմ Ձեռնադրումների Ուղին: Ես եմ ձեզ Ձեռնադրողը:

Այդ Ուղու վրա կան մի քանի նշաձողեր: Դրանցից մեկը՝ ընտրությունն է:

Դուք ինքներդ, Արարչի կողմից ձեզ տրված ազատ կամքով, ընտրություն եք կատարում երկու աշխարհների միջև՝ պատրանքային և աստվածային. կա՛մ որոշում եք մնալ էվոյուցիոն ուղու ճամփեզրին, կա՛մ հաջողությամբ շարունակում եք վեր էլնել էվոյուցիայի աստիճաններով:

Սակայն մինչև հիմա շատերին դեռ հասկանալի չէ ընտրության մասին այս Ուսմունքը: Ես կպարզաբանեմ: Ընտրություններ դուք միշտ եք կատարում: Բայց ձեզ համար ակներև չէ, որ դուք ընտրություն եք կատարում աշխարհների միջև: Դուք ձեր սովորական գործերն եք անում, զբաղվում եք ձեր մասնագիտական գործունեությամբ, և ձեր այդ գործունեության ընթացքում կատարում եք ձեր ընտրությունը:

Ասվածն ավելի հասկանալի դարձնելու համար բերեմ մի քանի կոնկրետ օրինակներ: Ասենք, դուք բժիշկ եք, և կանգնած եք հետևյալ հարցի առջև՝ ձեր այցելուին վնասակար պատվաստանյութ ներարկել, կամ առողջությանը վնասող դեղամիջոց նշանակել, թե՞ ոչ: Եթե դուք կառավարվում եք աշխատանքը կորցնելու վախով, այլ ոչ թե ձեր այցելուին օգտակար լինելու ցանկությամբ, ապա ընտրում եք տվյալ այցելուի առողջության համար վտանգավոր դեղամիջոցներ կիրառելու տարբերակը: Ըստ էության, մարդասպանություն է ձեր արածը, միայն թե՛ ավելի թաքնահյուս միջոցներով: Եվ ահա դուք արդեն Մեզ հակադիր ուժերի կողքին եք կանգնած:

Կամ, ասենք, ծրագրավորող եք և ձեր մասնագիտական գործունեության ընթացքում մասնակցում եք այնպիսի մի ծրագրի մշակմանը, որի օգնությամբ մարդիկ հայտնվում են Մեզ հակադիր ուժերի գլոբալ վերահսկողության տակ: Եվ ահա դարձաք այդ ուժերի համագործակիցը. դուք ձեր ընտրությունը կատարեցիք պատրանքային ուժերի օգտին:

Կամ՝ դուք ուժային կառույցների ներկայացուցիչ եք և որոշում եք զենք կիրառել կանանց, երեխաների, ծերերի դեմ: Եվ դրանով դուք փաստացի սպանում եք ձեր սեփական հոգին. ձեր հոգուն գրկում եք էվոյուցիան շարունակելու հնարավորությունից:

Կամ՝ պաշտոնյա եք, իշխանավոր, և սահմանում եք այնպիսի օրենքներ, որոնք կործանարար ազդեցություն են թողնում մարդկանց և նրանց կենսական պահանջումների՝ սննդի, կացարանի, երեխաների կրթության, բնակչության առողջության վրա: Ահա և արդեն դարձաք ոչ աստվածային գործերի մասնակից և խախտեցիք Աստծո Օրենքը:

Ահա այդպես է լինում, որ ձեզնից յուրաքանչյուրը, լինելով պաշտոնը, աշխատանքը կամ փողերը կորցնելու վախի ազդեցության տակ՝ կատարում է իր ընտրությունը: Ըստ էության, ձեր այդ ընտրությամբ ինքներդ ձեզ կապում եք նյութականության՝ մատերիայի հետ: Ինչ-ինչ միֆական բարիքներ կորցնելու ահից՝ դուք նախընտրում եք շղթայված մնալ մատերիային: Ինքներդ ձեզ գրկում եք ազատությունից: Գործելով Աստծո Օրենքներին ոչ համահունչ՝ ինքներդ ձեզ կտրում եք Աստուծուց: Եվ այդ ընտրության հետևանքը լինում է այն, որ մնում եք մատերիական ոլորտում ստրկացված վիճակում:

Փաստորեն դուք հրաժարվում եք աստվածատուր ազատ կամքից միայն այն բանի համար, որ ֆիզիկական ոլորտում ինչ-ինչ բարիքներից հանկարծ չգրկվեք: Եվ ահա վերածվում եք մատերիայի ստրուկների:

Մարդկանցից շատերը՝ Մեր Ուղերձներն ընթերցողների 90 տոկոսը, նույնպես սպառողներ են: Նրանք վերցնում են Մեր տված գիտելիքները, Մեր տված էներգիան, բայց չեն օգտագործում էվոյուցիայի աստիճաններով վեր ելնելու համար, այլ դրանք տրամադրում են իրենց կարիքները հոգալու գործին:

Կա նուրբ եզրագիծ, թե երբ են Մեր Ուղերձները նպաստում հոգևոր Ուղով առաջընթացին, և երբ՝ Մեր Ուղերձների ընթերցումն ավելի ու ավելի է ձեզ հեռացնում Աստծուց: Ամբողջ բանն այն շարժառիթի մեջ է, որով դուք ձեռնամուխ եք լինում Մեր Ուղերձների ընթերցանությանը:

Դա ևս այն Ուսմունքներից մեկն է, որը Մենք հաճախ ենք տվել՝ Ուսմունք շարժառիթի մասին, որով դուք ձեռնամուխ եք լինում ցանկացած գործունեության:

Կա միայն մեկ ճշմարիտ շարժառիթ՝ ծառայել Աստծուն և բոլոր կենդանի էակներին, օգնել մերձավորին և համայն կյանքին:

Ավաղ, Մեր Ուղերձների հետ առնչություն ունեցած մարդկանցից շատ քչերն են, որ ճիշտ շարժառիթով են առաջ տանում իրենց հոգու զարգացումը:

Նաև շատ քիչ են Մեր այն աշակերտները, որոնք ընթանում են Ձեռնադրումների Ուղով:

Նրանց Ուղին՝ ինքնագոհողության, ինքնահրաժարման, ինքնանվիրման և սպասավորության ուղին է: Նրանք ոչ մի փոխգիշման չեն գնում իրենց խղճի հետ, երբ ֆիզիկական ոլորտում կայացնում են որևէ որոշում: Նրանք ավելի շուտ իրենց կյանքը կգոհեն, քան կենթարկվեն ֆիզիկական ոլորտի բազմաթիվ քմայքներին, որոնք վերջին հաշվով հանգեցնում են հոգու կործանմանը:

Այժմ վրա է հասել այն ժամանակը, որի մասին Մենք բազմիցս նախագգուշացրել ենք՝ հատիկը որոմից ջոկելու ժամանակը: Պատրանքային աշխարհն ընտրած որևէ հոգի չի կարողանա մուտք գործել տիեզերական բոլորաշրջանի նոր փուլի մեջ: Այն ժամանակն է հասել, երբ ամենայն հիմը՝ այն ամենը, ինչի գոյատևումը հիմնված է իրեղենի, սովորությունների, կրքերի և արատների հետ կապվածության վրա, չի կարող գոյատևել Նոր Դարաշրջանում:

Բարդ ժամանակներ են... Ուստի Ես եկա, որ մեկ անգամ ևս ձեզ հիշեցնեմ Մեր Ուսմունքի այն հիմնադրությունները, որոնք հիմա խիստ անհրաժեշտ են ձեզ:

Իմ դարաշրջանը՝ Մայտրեյայի դարաշրջանը, սարերի հետևում չէ: Սակայն, մինչ նորը կգա, Երկիրը պետք է մաքրված լինի ամենայն հնից:

Այո՛, բարդ ժամանակներ են: Ուստիև Ես եկա: Եկա, որ նեցուկ լինեմ Իմ նվիրյալ Բողոքաստվաներին և ամրապնդեմ նրանց սպասավորությունը: Մեր ժամանակը մոտենում է:

Շատերը կփորձեն իրենց կյանքն ու իրենց ունեցվածքը փրկել՝ դիմելով դավանանության ու սպանության: Իմ Բողոքաստվաներն ավելի շուտ իրենց կյանքը կգոհեն, քան թե կնախընտրեն ծառայել Մեզ հակադիր ուժերին:

Ես եկա, որ ամրացնեմ ձեր հավատը և ձեր մեջ արթնացնեմ այն հոգևոր հերոսների որակները, որոնք գնացին խաչելության, ողջակիզման, սակայն հետ չկանգնեցին իրենց համոզմունքներից ու հավատից՝ մինչև վերջ ծառայելով Ճշմարտությանը:

Վերջում կուզեի ավելացնել հետևյալը. երկրները նույնպես անցնում են իրենց ձեռնադրումը, ինչպես առանձին մարդիկ:

Երկրների մակարդակի մասին Մենք դատում ենք՝ ելնելով Մեր ավետաբերների, Մեր դեսպանորդների նկատմամբ դրսևորված վերաբերմունքից: Շատ են եղել երկրներ, որտեղ սպանել են Մեր ավետաբերներին: Հիմա ու՞ր են այդ երկրները... Դրանք չկան:

Մեր դեսպանորդները որպես գործիք են ծառայում, որոնց օգնությամբ Մենք դատում ենք երկրների և առանձին անհատների գիտակցության մակարդակի մասին:

Եվ, իհարկե, Աստծո Օրենքը երբեք թույլ չի տա, որ անպատիժ ձևով ստորացնեն ու սպանեն Մեր դեսպանորդներին:

Հատկապես այն դեպքում, երբ Մեր Դեսպանորդի աշրամն Ուսմունք տարածելու վայրից վերածվում է Ուսմունք նվաստացնելու վայրի:

Հնարավոր է՝ ներկա պահին դուք կարողանաք այլ կերպ նայել նրանց, խելքի գաք և փոխեք Մեր Ուսմունքի նկատմամբ ձեր ընկալումները:

ԵՍ ԵՄ Մայրեյան՝ ձեր հոգիների նկատմամբ հոգածությամբ

Սանատ Կումարա
19 դեկտեմբերի, 2020 թ.

Մոլորակի ապագան կախված է այն բանից, թե որքանով կկարողանաք խավար ժամանակներում պահպանել ձեր Բոցը

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան: Այսօր, սիրելիներս, Ինձ հաջողվեց Կարմայական Վարչությանը համոզել, որ այս Ուղերձը տալն անհրաժեշտություն է: Մեր Ուսմունքն ամբողջական չէր լինի, եթե Մենք չշոշափեինք ևս մեկ կարևոր ասպեկտ:

Նախ՝ Ես կուզենայի, որ դուք հասկանաք, որ Մեր ամբողջ Ուսմունքը տրվում է Մարդկության նկատմամբ Սիրո խորագույն զգացմունքով:

Մենք արդեն ասել ենք, և Ես նորից կկրկնեմ. մարդկային գործունեության ամենակարևոր ոլորտը՝ ոգեղեն ոլորտն է: Մարդկային կյանքի մյուս բոլոր ոլորտների բարեհաջողությունը կախված է այն բանից, թե որքանով է կարգուկանոն հաստատված ոգեղեն ոլորտում:

Ուստի այսօր Մենք կանդրադառնանք մի նրբին ու չափազանց կարևոր թեմայի՝ Մեր Ուսմունքի հետևորդների շրջանում որոնք հատկից ջոկելու խնդրին:

Ուսմունքը Մեր դեսպանորդի միջոցով ձեր աշխարհ մուտք գործեց արտակարգ թողության շնորհի միջոցով, որը շնորհված էր Տիեզերական Խորհուրդի կողմից:

Այս կրիտիկական ու բեկումնային ժամանակահատվածում Երկիրը կարիք ուներ Հինավուրց Ուսմունքի նորացված մատուցման, որպեսզի ոգեղեն ոլորտում կարգուկանոն հաստատվելուց հետո նույնը տեղի ունենար նաև մարդկային գործունեության մյուս բոլոր ոլորտներում:

Մեր Ուսմունքի մատուցման հենց առաջին տարիներից Մենք բախվեցինք այն բանին, որ այն անհատականությունների 90 տոկոսը, որոնց Մենք նախապատրասել էինք այդ առաքելության համար, և որոնք նախքան մարմին առնելը որոշակի պարտավորություններ էին ստանձնել, այդ պարտավորություններն ի կատար անելու ժամանակի վրա հասնելուն պես մեկը մյուսի հետևից սկսեցին լքել Մեր դեսպանորդին: Երևի հասկանում եք, որ Մեր առաքելության իրականացումը չի կարող միայն մի մարդու հույսին թողնված լինել: Լավ ուսուցանված ու նախապատրաստված լուսակիրների մի ամբողջ ջոկատ որոշակի ուղղություններով պետք է օգնեք Մեր դեսպանորդին:

Եվ ահա առաջին մի քանի տարվա ընթացքում գործնականում բոլոր նրանք սկսեցին չկատարել իրենց ստանձնած պարտավորությունները: Ըստ էության, հրեշավոր դավաճանությունն տեղի ունեցավ: Այդ դավաճանությունն անուղղելի ծանր բեռի պես նստեց նշված անհատականությունների հոգիների վրա: Ավելի մեծ ցավ չկա, քան այն

պահը, երբ նրանք կկանգնեն Կարմայական Վարչության առջև ու կիմանան իրենց կատարած հանցանքի մասին:

Մենք ստիպված եղանք շտապ կարգով տառագիրորեն հրնթացս, փոխել առաքելության պլանը՝ իրականացնել այն, բայց կրճատված ձևով:

Հաջորդը, որին Մեզ վիճակվեց բախվել, այն անահատականություններն էին, որոնք մտան Մեր Ուսմունքի դրոշի տակ, գեղեցիկ խոսքեր ասացին և նույնիսկ փորձեցին գրադվել մեր գործերով: Սակայն նրանք գառան մորթի հագած գայլերն էին:

Դարեր շարունակ այդ անահատականությունները ձախողել են Մեր առաքելությունները՝ գործելով հոգևոր համայնքներում, վանքերում ու մեր առաքելություններին կից կառույցներում:

Եվ ահա նրանք վերջապես մարմին են առել որոմը հատիկից ջոկելու այս ժամանակահատվածում: Վտանգն այն է, որ այդ անահատականությունները կործանարար ձևով են ազդում թույլ հոգիների վրա և նույնիսկ սպանում են այդ հոգիներին: Այս անգամ մենք արդեն տեսնում ենք նրանց գործունեության բացահայտ պտուղները: Ըստ էության, հենց նրանց անմիջական միջամտությամբ էր, որ մեր առաքելությունը Ռուսաստանում չիրականացավ, և մյուս երկրներն էլ էապես տուժեցին:

Բայց հիմա արդեն Կարմայական Մեծ Վարչությունն անհերքելի փաստերի է տիրապետում, որոնք թույլ կտան Մեզ հակադիր ուժերին կանգնեցնել Կարմայական Դատարանի առաջ: Մեր դեսպանորդին Ես իշխանություն եմ տալիս բացահայտելու այդ անահատականությունների անունները: Դա չի նշանակում, թե ամեն ոք կարող է օգտվել նման իրավունքից: Մի՛ դատեք, որ չդատվեք: Սակայն կոնկրետ այս իրավիճակում անուններ տալն անհրաժեշտ է, քանի որ շատերն են հետևում նրանց արարմունքներին, շատերն են հավատում գառան մորթով գայլերին, ենթարկվում նրանց ու կորցնում իրենց հոգիները: Որոշներն էլ, տեսնելով այդ անահատականությունների գործած ապօրինությունները՝ տարակուսում են, թե ինչու՞ են նրանք գտնվում Մեր Ուսմունքի հետևորդների շարքերում: Եվ դա շատ լուսավոր հոգիների հեռու է վանում Մեր Ուսմունքից:

Ես շատ լավ հասկանում եմ, որ այդ անահատականությունները կարող են վրեժ լուծել Մեր դեսպանորդից՝ կիրառելով իրենց փորձված հնարքները՝ սուտը, զրպարտանքը, հեղինակագրկումը: Բայց քանի որ Մեր դեսպանորդն անբաժան է Մեր Ուսմունքից, ապա նրանց վրեժը հարվածի տակ կդնի Մեր Ուսմունքը: Իսկ դա կնմանվի այն բանին, թե ինչպես Մովսեսը, սարից իջնելով, տեսավ Ոսկե Հորթի շուրջ պար բռնածներին և զայրացած ջարդոխուրդ արեց Աստծո ձեռքով գրված և Աստծո Օրենքները պարունակող քարե տախտակները:

Երևում է դեռ չէր հասել այն ժամանակը, որ Մեր Ուսմունքը տրվի ձեր աշխարհին: Ներկայիս աշխարհը չափազանց խավար ու անհյուրընկալ եղավ բարձր Ուսմունքի համար:

Մենք չենք կարող թույլ տալ, որ Մեր Ուսմունքի շուրջ խռնվեն այնպիսի զագրելի բաներ, ինչպիսիք են՝ գողությունն ու թալանը, խաբեբայությունը, դավաճանությունը, զրպարտանքը և բացահայտ անհարգալից վերաբերմունքը Մեր դեսպանորդի նկատմամբ:

Հարկ է նշել նաև, որ մեր, այսպես կոչված, հետևորդների մեծ մասը բոլորովին չեն տարբերվում Մովսեսի օրոք Ոսկե Հորթի շուրջ պար բռնածներից: Նրանք Մեր Ուսմունքը սպառողների դերում են և Մեր Ուղերձները կարդում են այնպես, կարծես դա հերթական զվարճանք լինի իրենց համար, որից հետո անմիջապես վագում են ուրիշ, ավելի նրբակազմ հոգևոր հանույքների հետևից: Նման հոգևոր սպառողներն արժանի չեն, որ մոտենան Մեր Ուսմունքին: Ժամանակն է, որ ապականված հոտից առանձնացվեն առողջները:

Ճիշտ ժամանակն է, որ Մեր դեսպանորդը Մովսեսի նման բացականչի. «Ով Աստծուն է, թող մոտենա ինձ...»: Երևի հիշում եք, թե ինչ կատարվեց նրանց հետ, ովքեր շարունակեցին պարել Ոսկե Հորթի դիմաց¹:

¹ հատվածներ Աստվածաշնչից

Սակայն ձեր ժամանակներում դավաճաններին սրով պատժելու կարիք չի զգացվի: Բավական է թուլացնել կարմայի գապոդակը, և Երկիրը կթաղվի խավարի ծածկոցի տակ: Ոսկե Հորթի պաշտպանները մարդկության ոչնչացման համար բազմաթիվ նրբակերտ զենքեր են ստեղծել: Հենց այդ զենքերով էլ կոչնչացվեն Ոսկե Հորթի շուրջ ժամանակակից պարողները:

Ընդամենը մի բուռ ընտրյալներ կան, որոնք հավատարիմ են մնացել Աստծուն, Վեհապետներին ու Մեր դեսպանորդին: Քանի դեռ Մեր հավատարիմ սպասավորների չակրաներում վառվում են լուսատու ջահերը՝ Երկիր մոլորակի կենսահոսքերի փրկության հույսը չի մարի:

Ուստի այսօր Ես ձեզ եմ դիմում, ո՛վ, իմ արծվաբնի սիրելի ձագեր: Հենց ձեզ է վիճակված, որ վիթխարի չափերով լարեք ձեր բոլոր ուժերն ու կարողությունները, որպեսզի փրկվեն ձեր շրջապատում եղած այն հոգիները, որոնք դեռ պահպանել են իրենց հավատն ու նվիրվածությունը:

Առանց ոգեղեն ոլորտում կարգուկանոն հաստատելու՝ հնարավոր չէ կարգուկանոն հաստատել մարդկային գործունեության մնացած ոլորտներում: Անագնիվ, ստաբարո մարդիկ և նրանք, որոնք հարգանք չունեն Հիերարխիայի և Մեր դեսպանորդի նկատմամբ, չեն կարող անհրաժեշտ փոփոխություններ մտցնել ոգեղեն ոլորտում: Իսկ առանց այդ փոփոխությունների՝ հնարավոր չէ աստվածային փոփոխություններ իրականացնել համայն աշխարհում:

Ծանր ժամանակներ են սկսվում: Հիշեցնեմ, որ դրանք պայմանավորված են մարդկային հանրության առավել գիտակից ու առաջավոր հատվածի կատարած ընտրությամբ: Այս բարդ ժամանակներում մարմնավորման էին ուղարկվել լավագույնները: Ծատ ցավալի է, որ նրանց մեծ մասը կա՛մ դավաճանություն գործեցին, կա՛մ Ուղուց շեղվեցին՝ գայթակղվելով Ոսկե Հորթի շուրջ պար գալու գործով:

Փոխարենը հիմա պարզորոշ տեսանելի է, թե ինչպես է մարդկության լավագույն մասի կատարած ընտրությունն անդրադառնում ոչ միայն ամբողջական երկրների, այլ նաև ամբողջ աշխարհի ճակատագրի վրա:

Վերջում կոչ եմ անում Մեր նիրյալներին ու հավատարիմ մնացածներին, որ պատրաստվեն ծանր ժամանակներին: Մոլորակի ապագան կախված է այն բանից, թե որքանով կկարողանաք խավար ժամանակներում պահպանել ձեր Բոցը:

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան:

**Եվ եթե մարդկության նկատմամբ իմ մեծագույն Մերը չլիներ, Ես այսօր չէի գա,
որպեսզի աշխարհի իրավիճակը պարզաբանող Ուղերձ տամ:**

ՕՄ

Պաշտելի Բաբաջի
20 հունիսի, 2021 թ.

**Իմ Ուղերձի նպատակն է՝ արթնացնել նրանց,
ովքեր դեռևս ունակ են արթնանալու պատրանքի քաղցր քնից**

ԵՄ ԵՄ Բաբաջին...

Այսօր Ես կրկին եկել եմ, որպեսզի դուք մեկ անգամ ևս հիշեք Մեր գոյության և Մեր Ուսմունքի մասին:

Ես եկել եմ ձեզ հիշեցնելու այն Օրենքի մասին, որը գործում է այս Տիեզերքում: Հիշեցնելու այն Միտ մասին, որը միշտ ձեզ հետ պետք է լինի: Քանզի առանց այդ Միտ, որը պարուրում է ձեր ողջ էությունը և ընդգրկում ողջ աշխարհը՝ ողջ Արարչությունը, դուք այլևս չեք կարող շարունակել ձեր գոյությունը:

Վախն ու գիտակցության բացասական վիճակներն առաջանում են հենց այնտեղ, որտեղ Մեր չկա:

Ուստի ձեր կյանքերի ընթացքում առաջնայինը պետք է լինի Սիրո զգացման վերականգնումը:

Իմ և մյուս Վեհապետների Ուղերձներում ոչ մի նոր բան չկա, որը Մենք նախկինում՝ բազմահազար տարիներ առաջ, տված չլինեինք իմաստունների, մարգարեների և դեսպանորդների միջոցով:

Այնուհանդերձ հարկ է, որ պարբերաբար ձեզ հիշեցնենք մեր գոյության մասին, որպեսզի դուք իմանաք, որ մենակ չեք Տիեզերքում:

Մենք մշտապես հետևում ենք ձեր զարգացմանն ու հոգևոր Ուղով ձեր առաջխաղացմանը: Եվ այնժամ, երբ Էվոյուցիան հասնում է իր զարգացման կրիտիկական կետին և Երկիր մոլորակի բանական քաղաքակրթության բուն գոյությունը հայտնվում է սպառնալիքի տակ, Մենք չենք կարող չգալ և ձեզ չհիշեցնել Մեր Ուսմունքի հիմնադրույթները:

Մենք բազմիցս խոսել ենք ցանկությունների հաղթահարման և ձեր աշխարհի պատրանքային դրսևորումներից հրաժարվելու անհրաժեշտության մասին:

Սակայն ծուլության և անխելամտության պատճառով Մեր հետևորդները հարկ եղած ուշադրություն չեն հատկացնում Մեր ցուցումներին:

Օրինակ՝ այժմ պատրանքը մի շարք նոր թակարդներ է լարել ձեր գիտակցության համար, որոնք ձեզ շեղում են Ուղուց: Փափուկ ու աննկատ: Խոսքս վերաբերում է խելացի հեռախոսների ու, այսպես կոչված, սոցիալական ցանցերի հետ ձեր կապվածությանը: Ինչի՞ց որոշեցիք, թե կապվածության այդ տեսակները ձեր հոգիներին ավելի քիչ վնաս են հասցնում, քան ակոհոլը, նիկոտինը, ոչ ճիշտ յոթնով երաժշտությունը, թմրանյութերը, մոլի խաղերը...

Սոցիալական ցանցերում անցկացրած ձեր մի ժամը մի ամբողջ տարով հետ է գցում Ուղով ձեր առաջընթացը: Իսկ կանոնավոր կերպով սոցիալական ցանցերից մեկ տարի օգտվելը կարող է ընդմիջտ ձեզ գրկել Էվոյուցիոն զարգացման հնարավորությունից:

Հաջորդ հարցը, որը Ես կցանկանայի լուսաբանել Իմ այս Ուղերձում՝ Մեր Դեսպանորդի նկատմամբ վերաբերմունքն է: Ես արդեն ասել եմ իմ նախորդ Ուղերձներումⁱ, որ Մեր Դեսպանորդի նպատամամբ դրսևորած ձեր վերաբերմունքով ենք Մենք դատում, թե ձեր քաղաքակրթությունն ունա՞կ է արդյոք հետագա զարգացման, թե՞ լրացնելու է անցյալի ձախողված քաղաքակրթությունների աղբակույտը:

Եկեք միասին քննարկենք:

Երկրի մարդկության հետ մենք աշխատում ենք միլիոնավոր տարիներ: Հիմնական հոգևոր աշխատանքն ու ուսուցումը Մենք անցկացնում ենք հատուկ ստեղծված վայրերում՝ Եղբայրության Աշրամներում: Մեր այս Դեսպանորդի Առաքելության սկզբում այդպիսի մի Աշրամ ստեղծվեց Օմսկի մոտակայքում: Դա հինավուրց ուժային կենտրոն է, որտեղից Մենք պլանավորել էինք տարածել Մեր Ուսմունքը և մարդկության գիտակցությունը բարձրացնել նոր մակարդակի:

Մեր սաների պարտականությունն է՝ հոգ տանել Մեր Դեսպանորդին և անհրաժեշտ պայմաններ ապահովել Ուսմունքի տարածման համար:

Մի քանի տարվա ընթացքում Մենք Ուղերձներ տվեցինք Մեր Դեսպանորդի Աշրամում՝ շրջակա տարածքը հազեցնելով Աստվածային թրթռանքներով: Ձեզ մնում էր միայն վերցնել Մեր տված Շնորհը և աչքի լույսի պես այն պաշտպանել հակադիր ուժերի ներկայացուցիչներից:

Սակայն Մեր այդ առաջնակետը (Ֆորպոստը) զավթեցին հակադիր ուժերը: Պղծեցին ու ավերեցին այն:

Շանր կարճա նստեց այն լուսակիրների ուսերին, որոնք հատուկ մարմնավորվել էին, որպեսզի պաշտպանեն Մեր Առաքելությունը Ռուսաստանում:

Այդ կարճա այնքան նեղացրեց լուսակիրների գիտակցությունը և մթագնեց տեսողությունը, որ նրանք դադարեցին Լույսը խավարից տարբերել և հասկանալ Մեր Ուսմունքի ամենապարզ դրույթները:

Մարդիկ, որոնք Երկրի աղը պետք է դառնայինⁱⁱ, դրսևորեցին դավաճանության և ուրացման դառը պտուղներ:

Ի՞նչ կվիճակվի նրանց... Դեն նետվել ու փռվել այն ճանապարհին, որով կընթանան ապագա Էվոյուցիոն կենսահոսքերը:

Կան սխալներ, կան մոլորություններ և կան մեղքեր: Ամեն բան կարելի է հասկանալ ու ներել: Սակայն ամենաձանր մեղքի՝ դավաճանության համար, ո՛չ արդարացում կարող է լինել, ո՛չ էլ ներում:

Մեր Դեսպանորդի մարմիններին ամրացված Լույսի Կիզակետը պաշտպանելու համար Մենք ստիպված եղանք Դեսպանորդին դուրս հանել Ռուսաստանի սահմաններից:

Երբ որևէ մարդ դատապարտելի արարք է կատարում Մեր Դեսպանորդի նկատմամբ, նա կարմա է ստեղծում, որը նստում է նրա ցեղի մի քանի սերնդի ուսերին:

Մեր այս Դեսպանորդի պարագայում այնպես ստացվեց, որ Ռուսաստանի պետական մարմիններն սկսեցին հետապնդել և ճնշումներ գործադրել Դեսպանորդի, ինչպես նաև նրա հարազատների ու մերձավորների նկատմամբ:

Մեր Դեսպանորդի պատմությանի առանձնահատկությունն այնպիսին է, որ Դեսպանորդի դեմ ուղղված ցանկացած արարք անդրադառնում է պատմությանից և հազարապատիկ ուժով վերադառնում նրան, ով թույլ է տվել այդ արարքը: Դա վերաբերում է ինչպես չար կամքն ի կատար ածող առանձին մարդ-կատարածուներին, այնպես էլ ամբողջական երկրներին, որոնք, հարկ եղած պատվի չեն արժանացնում Մեր Դեսպանորդին:

Ռուսաստանի հետ Մենք մեծ հույսեր էինք կապել: Ներկայումս այդ հույսերն արդարացված չեն:

100 տարվա ընթացքում Ռուսաստանը երկու անգամ մերժեց Մեծ Մայիտակ Եղբայրության օգնության ձեռքը:

Առաջին անգամ դա տեղի ունեցավ 20-րդ դարի սկզբին, երբ մերժվեց Ռեբիիսների ընտանիքի միջոցով փոխանցված Մեր Ուղերձը, իսկ երկրորդ անգամ՝ 21-րդ դարի սկզբին, երբ Ռուսաստանի տարածքում հետապնդումների ենթարկվեց Մեր Դեսպանորդը:

Երկիրը, որը մերժում է Մեր օգնությունը և հալածանքների ենթարկում Մեր Դեսպանորդին, չի կարող իր գոյությունը շարունակել որոշակի պատմական ժամանակահատվածից այն կողմ և դատապարտված է մասնատման ու մահվան:

Տվյալ երկրի բնակչության մեծամասնությունը չի հասկանա իր գլխին թափվող աղետների ու դժբախտությունների պատճառը: Սակայն Ես կկրկնեմ ևս մեկ անգամ՝ երկրներն իրենց ընտրությունը կատարում են իրենց լավագույն ներկայացուցիչների ձեռամբ:

Ավանդ, ձեր լավագույն ներկայացուցիչները գարշելի ոչխարներ դուրս եկան, իսկ որոշ գառան մորթով գայլեր շարունակում են սողոսկել նրանց շարքերը, որպեսզի վերջնականապես մոլորեցնենⁱⁱⁱ:

Ես ուզում եմ, որ ձեր գլուխը մտնի այն բանի պատճառի ըմբռնումը, որը շուտով տեղի կունենա և արդեն տեղի է ունենում:

Չար դևեր գոյություն չունեն մինչև այն պահը, քանի դեռ նրանք չեն տեղավորվել ձեր գիտակցության մեջ: Երբ լուսակիրները չեն կատարում իրենց առաքելությունը, մոլորակը հայտնվում է հակադիր ուժերի իշխանության տակ:

Երկար ժամանակ չի կարող գոյատևել այն քաղաքակրթությունը, որն ինքն իրեն կտրել է Աստուծոց և Նրա Օրենքից:

Այդպես եղել է անցյալի շատ քաղաքակրթությունների հետ, այդպես կլինի նաև ձեր քաղաքակրթության հետ:

Չրկվելով Լույսի Կիզակետից և Մեր Ուղերձների անմիջական փոխանցումից՝ Ռուսաստանի լուսակիրները չկարողացան իրենց գիտակցությունը պահել հարկ եղած մակարդակի վրա և կատարեցին երկրի համար իրենց ընտրությունը: Քանի որ, համաձայն Աստծո մտահղացման, Ռուսաստանը պետք է ուղի ցույց տար ամբողջ աշխարհին, ապա վերջինս ամբողջությամբ հայտնվեց քառսի ու խառնաշփոթի գոտում:

Առանց Աստծո էներգիայի ոչինչ չի կարող գոյատևել:

Իսկ ո՞րն է ելքը:

Ելք միշտ կա՝ վերադառնալ զարգացման Աստվածային Ուղի:

Ընդունել Մեր առաջնորդությունը և պահպանել Աստծո Պատվիրանները: Չխախտել Բարոյական Օրենքը:

Պատվել Աստծուն, Վեհապետներին և Մեր Դեսպանորդներին:

Իմ այսօրվա Ուղերձի նպատակն էր՝ արթնացնել նրանց, ովքեր դեռևս ունակ են արթնանալու պատրանքի քաղցր քնից:

Մեր օգնությունը միշտ կարող է ցուցաբերվել: Բայց դրա համար պետք են հոգիներ, որոնք ունակ են սիրանքի, ինքնագողության, սպասավորության: Հոգիներ, որոնք իրենց անոթները նախապատրասել են Աստծո էներգիայի համար, որով Մենք միշտ պատրաստ են լցնել մաքուր սրտերը:

ԵՍ ԵՄ Բարաջին

Տեր Շիվա

19 դեկտեմբերի, 2021 թ.

Այսօրվա Իմ Ուղերձը շատ քչերին հասկանալի կլինի

ԵՍ ԵՄ Շիվան... Ես եկա...

Այսօր Ես պատրաստ եմ լուրջ խոսակցության և հստակ հասկանում եմ, որ այն, ինչի մասին Ես այսօր կխոսեմ, կհասկանան շատ քչերը նույնիսկ նրանցից, ովքեր երկար տարիներ կարդում էին Մեր Ուղերձները:

Եվ այսպես՝ հայտնի է, որ Տիեզերքում ամենայն ինչ գոյություն ունի Աստծո էներգիայի շնորհիվ: Աստծո էներգիան առկա է համայն Արարվածում և ապահովում է դրա գոյությունը: Երբ Աստծո էներգիան բացակայում է, ամեն ինչ ցրիվ է գալիս, քանի որ այլևս չի լինում այն, ինչով կապակցվում է մատերիան:

Աստծո էներգիան ձեր աշխարհ մուտք է գործում լուսակիրների չակրաների միջով և ապա բաշխվում ամբողջ ֆիզիկական աշխարհում՝ ապահովելով նրա գոյությունը:

Մենք ասել ենք, որ այժմ Երկիրն ապրում է իր կրիտիկական, բեկումնային ժամանակը: Որպեսզի անցումային շրջանը հաջող ընթանա, մարմնավորման էին ուղարկվել մարդկության լավագույն ներկայացուցիչները: Մենք խոսել ենք 144 հազար մարդկային անհատականությունների մասին, որոնք օժտված էին քրիստոս-էակներ դառնալու ներուժով: Դա հենց այդպես էր այն ժամանակ, երբ Մենք սկսեցինք աշխատել Մեր Դեսպանորդ Տառյանայի միջոցով: Մեր Ուղերձների և մարմին առած լուսակիրների օգնությամբ Մենք պլանավորել էինք մոլորակում իրականացնել արագ ու անցավ աստվածային կերպափոխություն:

Մակայն հետո չպլանավորված բաներ տեղի ունեցան: Լուսակիրները կարդում էին Մեր Ուղերձները, լսում էին Մեր Դեսպանորդին, բայց չէին առաջնորդվում Մեր հանձնարարականներով: Մեր Ուղերձներում եղան հարյուրավոր հանձնարարականներ ու խորհուրդներ, որոնք փոխանցեցինք Մեր Դեսպանորդի միջոցով: Գործնականում բոլոր դրանք անտեսվեցին լուսակիրների մեծ մասի կողմից:

Ի՞նչ է դա նշանակում. ամեն մի ոչ ճիշտ ընտրությունից հետո չակրաները թեթևակի փակվում են, ինչի հետևանքով բարակում է ձեր աշխարհ մուտք գործող Աստծո էներգիայի հոսքը: Ամբողջ 18 տարվա ընթացքում, երբ Մեր Դեսպանորդի միջոցով բացված էր աստվածային հնարավորություն, գործնականում բոլոր լուսակիրները կատարեցին իրենց ընտրությունը, այդ թվում և վերջնական ընտրությունը: Լուսակիրների չակրաները դադարեցին Աստծո Լույսը փոխանցել աշխարհին: Իսկ Ուսմունքից ձեզ հայտնի է, որ այն աշխարհը, որն աստվածային էներգիա չի ստանում, ենթակա է ոչնչացման: Ուստի մոտակա ժամանակներում աշխարհը կփլուզվի:

Իհարկե, մարմնավորման մեջ դեռևս մնացել են առանձին անհատականություններ, որոնց ներսում դեռ բոցկլտում է Աստծո Կայծը: Մակայն այդպիսի անհատականությունների քանակը չափազանց փոքր է:

Այն բանին համընթաց, երբ լուսակիրները կատարում էին իրենց ընտրությունը, և չակրաներն էլ մեկը մյուսի հետևից փակվում էին՝ նրանք կորցնում էին զանազանման շնորհն ու մյուս աստվածային հատկանիշները: Նրանց սկսում էր թվալ, թե Աստծո ճշմարտություն և՛ այստեղ կա, և՛ անտեղ: Մեր Ուղերձների ընթերցանությամբ նրանք այլևս բավարարվածություն և էներգիա չէին ստանում, քանի որ հետան էին ապրել իրենց այն օրգանները, որոնցով ընկալում էին Մեր էներգիաները:

Մեր էներգիաները յուրացնելու անկարողությունը հանգեցրեց ուժերի անբավարարության, ընկճախտի, ապրելու ցանկության կորստի: Լուսակիրները պասիվացան և ենթարկվեցին հոգեվիճակը քայքայող արտաքին ազդեցությունների ու ներշնչումների:

Նրանցից շատերը նույնիսկ համաձայնեցին փոխել իրենց աստվածային էությունը՝ ենթարկվելով, այսպես կոչված, պատվաստման: Փաստորեն դա հրաժարում էր Աստծո տված կերպից՝ ԴՆԹ-ի կառուցվածքը փոխելու համաձայնություն, հրաժարում Աստծո կողմից:

Մարդիկ կամովին հրաժարվեցին աստվածակերպ լինելուց: Հոգու մահից հետո վրա է հասնում ֆիզիկական մարմնի մահը:

Սկզբում մարդիկ հրաժարվում են աստվածային հատկանիշներից, դավաճանում Մեզ, Մեր Ուսմունքին և Մեր Դեսպանորդին, հետո փակվում են չակրաները և վրա է հասնում Հոգու մահը:

Այնուհետև մոլորակն ամբողջությամբ հայտնվում է հակադիր ուժերի տիրապետության տակ, որոնց գործը՝ աստվածային բարեշրջությանը ոչ պիտանի մարդկության ոչնչացումն է:

Դա արվում է ամենաճարտար մեթոդներով: Սննդով, օդով ու ջրով մարմինը հագեցվում է այնպիսի վնասակար նյութերով, որոնք վերջնականապես քայքայում են մարդու էներգետիկական կառուցվածքը: Չանազան ճառագայթումների ազդեցությամբ անհնար է դարձնում նույնիսկ այն մարդկանց չակրաների համակարգի գործառնությունը, որոնց չակրաները երբևէ բաց են եղել:

Աշխարհն ավելի ու ավելի է կտրվում Աստծո էներգիայից և ավելի ու ավելի է մոտենում լիակատար ավերման սահմանագծին:

Պատճառը լուսակիրների ոչ ճիշտ ընտրությունն է՝ այն 144 հազար լուսակիրների, որոնք պետք է դառնային քրիստոս-էակներ, սակայն իրենց այդ ընտրությամբ կորցրին աստվածայնությունը և դադարեցին կատարել իրենց գործառնությունը՝ աշխարհին փոխանցել Աստծո էներգիան:

Նրանք կորցրին զանազանելու կարողությունը և բռնեցին դավաճանության, բամբասանքի, խեղաթյուրման, ստի, խաբեության, խաբեբայության ու գողության ուղին: Ելք կա՞ արդյոք... Եվ ի՞նչ անեն նրանք, ովքեր դեռ չեն կորցրել Աստծո Կայծը...

Քանի որ լուսակիրների մեծ մասի էներգետիկական համակարգը քայքայված է, նրանք այլևս հնարավորություն չունեն գործելու նուրբ ոլորտում: Այդ ոլորտում ճակատամարտը տանուլ է տրված: Մնում է գործել ֆիզիկական ոլորտում: Դուք նաև չեք կարող կիրառել բռնություն չգործելու սկզբունքը, քանի որ արդեն չունեք դրա համար անհրաժեշտ Ոգու ուժը: Աշխարհում սպասվում են կույր եղբայրասպան պատերազմներ: Սակայն սեփական հողի, սեփական ընտանիքի և սեփական տան պաշտպանության նպատակով արդարացի պատերազմ վարելը կարող է ձեզ համար Ուղի բացել:

Ես շատ լավ եմ հասկանում, որ զանազանման, ինտուիցիայի և այլ աստվածային հատկանիշների բացակայության պարագայում շատ դժվար է ճիշտ ընտրություն կատարել և շարժվել ճիշտ ուղղությամբ: Մնում է, որ հույսներդ դնեք ձեր հիշողության վրա, ըստ դրա գցեք-բռնեք և գուշակեք ճիշտ ուղղությունը:

Հարկ կլինի, որ մարդանման էակը վերագտնի իր մարդկային կերպարանքը, վերագտնի իր ինտելեկտը և դրան հատուկ քննադատական մտածողությունը, ազատամտությունը, պարզ և անկախ մտածելակերպը:

Հարկ կլինի կյանքին վերադարձնել բարոյականությունն ու խղճի մտքը կենսակերպը, վերհիշել մարգարեների ու դեսպանորդների տված Պատվիրանները:

Հարկ կլինի կյանքի բոլոր դրսևորումները զարդարել գեղեցկությամբ, վերհիշել երաժշտության, ճարտարապետության, գեղարվեստի ճիշտ կերպերը:

Աստվածային Ուղուն վերադառնալը հեշտ չի լինի: Բայց դա հնարավոր կլինի նրանց համար, ովքեր ցանություն կունենան պահպանել իրենց Հոգին և լինել Աստծո հետ:

Պաշտելի Ալֆան, ով 2002-2003 թվականների սահմանագծում այս դեսպանորդին՝ Տատյանային 18 տարի առաջ աստվածային հնարավորություն տվեց, Ինձ խնդրեց ձեզ հաղորդել, որ Ինքը հետ է վերցնում այդ աստվածային հնարավորությունը:

18 տարվա՝ մեկուկես 12-ամյա շրջափուլի ընթացքում, մեր նախաձեռնություններից և ոչ մեկը լուսակիրներն իրականություն չդարձրին: Այն, ինչ չի օգտագործվում՝ հետ է վերցվում:

Այսօրվա Իմ Ուղերձը հասկանալի կլինի նրանցից շատ քչերի համար, ովքեր կարդում են Մեր Ուղերձները, և բացարձակապես հասկանալի չի լինի նրանց համար, ովքեր դեռևս չեն սկսել կարդալ Մեր Ուղերձները:

Ի դեպ, ներկայումս Մեր Ուղերձները կարդալ սկսող հարյուր մարդուց միայն մեկն է, որն ունակ է դրանք կարդալ մինչև վերջ: Մարդիկ կարդալուց հետ են վարժվում և, հետևաբար, մտածելուց են հետ վարժվում և, հետևաբար, դադարում են մարդ լինել...

Բայց դա ձեր սեփական ընտրությունն էր, որ կատարեցիք ձեր ազատ կամքով...

Ես հրաժեշտ եմ տալիս ձեզ:

ԵՍ ԵՄ Ծիվան...

ⁱ Պաշտելի Բաբաջի, 5 դեկտեմբերի 2009թ., 20 հունիսի 2010թ.

ⁱⁱ Մտթ., 5:13

ⁱⁱⁱ Սանատ Կումարա, 19 դեկտեմբերի 2020թ.